

ԱՐՔՈՒՅՀԻ ԵՂԻՎՑԵԿ

ԽԱՅՏԱՆԵՐԻ

ՀՅԱՆԱԾ ԳՐՈՒԹԻՒՆ Բ. Յ.

ՆԱՐԱ ԳԵՐԵՍԱՑԱՆ ՎԻՄԱՑԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ,

ՀԱՅՈՒԹ-ՀԱՅԵՐ

ԱԽՈՅԵԼ ԳԱՐՐԵԼԵՐՆ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ



ՈՒԱՍՈՒ (ՀՀ ՀՀԿ)

ՑՎԱՐՈՆ ՕՋՎԱՆՆԵՐ ՑԵՐ-ԱՐՄԵՆԻԱՆՆԵՐՆ

1876 - ԱՅԻԴ



ԵՐԵՎԱԿՆԻ ԵՂԻԿՈՅԵՐԱՆ


Խ Լ Բ Տ Տ Ա Կ Ե Ա Կ

Յ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Տ Ն Ե Հ Յ

ՆՈՐԸ ԳԵՐՄԱՆՈՎԵԼ ՎԵՐԱՑՄԻ ՊԱՏՎԱՐԵՐՈՎ,

— 1 —

ԱՐԺԱՐԵԼ ԳԱՐԴԻԼԵԼ ՊԱՏՎԱՐԵՐՆ



ԱՐԺԱՐԵԼ (ՀՀՀ Հրա)


ՏՊՐՈՒՆ ՅՈՎԱՅԱԽ ՏԵՇ-ԱՐԴՐԱՅԻՐԵՐՆ


1876-1881

Дозволено Цензурой. С.-Петербургъ, 20 Декабря 1874 года.

276  
277

278







## ՄԻՐԸԿԵՆ ՄԵՐԿՈՍ

Ես մոտադիր եմ քեզ մի բօթ հաղորդել, որ — հաւաստի գիտեմ—  
Քեզ կայծակնահար պիտի անէ, պիտի սաստիկ տիրեցնէ, պիտի  
վրդովէ ներքին հոգեկան անդորրութիւնդ, բոլոր ուրախութիւնդ պիտի  
թունաւորէ, քու շատ փայլուն յոյսերդ. ՚ի գերեւ պիտի հանէ. գիտեմ  
այդ ամեն զիտուդ գալու աղէտքը և վիշտքը, այնու ամենայնիւ կա-  
սեմ քեզ այդ բօթը: Բայց դու չիմանաս, որ այդ տիրալի լուրը պատ-  
մելիս՝ իմ նպատակն է քեզ տրտմեցնել, ոչ. Ես վախենում եմ, մի՛  
գուցէ ուրիշ մարդումէ անզգուշութեամբ լսելով նոյն իսկ աղէտայի  
անցքը՝ քեզ մի վաս բան պատահի—Աստուած հեռի անէ: Այդ  
պատճառաւ, ես ամեն զգուշութեամբ կաշխատեմ, տալով հարուած  
քու սրտին, մի և նոյն ժամանակ դնել փրկաւէտ բալասան նորա վերայ.  
Կէս բերանովս կտրտմեցնեմ քեզ և կիսով կմիսիթարեմ: Ուրեմն ոյժու  
վրադ ժողոված լսէ. սիրտդ ամրացնւր. ջանա, որ եթէ արտասունքու  
վազէ ես, բայց վազէ ոչ յուսահատ սրտէդ: Բնութեան անհրաժեշտ  
հարկ տալը չի սպանիլ ոչ բնականապէս և ոչ բարոյապէս:

Վու մայրը, քեզ, միշտ սիրող մայրը, քու կեանքով կեցող, քու  
ուրախութեանդ ուրախակից, քու տրտմութեան տրտմակից, միով  
բանիւ՝ նա որ ոչ մի բոպէ չէր երևակայում առանց քեզ ապրիլ աշ-  
խարհիս երեսին՝ քեզ թողեց այս աշխարհիս մէջ մենակ. նա քեզ  
որբացուց և ինքը թուաւ գնաց այն տեղ, ուր ամենքս մի օր պիտի

Երթանք։ Վանի որ մանուկ ենք, քանի որ երիտասարդ ենք կամ քանի որ լի ուժով այր ենք՝ չենք կամենում։ բայց երբոր հանէ մեր ծերութիւնը կամ զառամութիւնը՝ մենք սրտի բաղձանքով ձկուում ենք դէպի այն լաւագոյն աշխարքը, ուր չի կայ ոչ ցաւ, ոչ վիշտ և ոչ տառապանք։ Վու մայրը մեռաւ . . . քու մայրը մեռաւ, կրկնում եմ, թողնելով ետևէն տամներկու որբ . . . ի՞նչ եմ ասում, առաւել քան թէ տամներկու, —տամներեք որբ թողեց նա. ինչո՞ւ պիտի մոռանանք քու հօրը. նորա կեանքն ևս այնքան ամուր կապուած էր մօրդ կեանքի հետ, որ յետ նորա մահուան՝ այն մարդը, որ բոլոր քաղաքի վկայութեամբ, որբերու հայր էր, ինքը այս բոպէիս մի շարք դրուեցաւ ձեզ հետ, նա էլ ձեզ պէս որբացաւ։ Իայց ես դարձեալ սիսալում եմ, նայէ մեծ-հօրդ և մեծ-մօրդ երեսին. ի՞նչ յուսահատութիւն, ի՞նչ անմիջիթար տրտմութիւն գծազրուած է այնտեղ. նայէ նոցա ազքերին. արտասունքը, ինչպէս կիզեւ բոց, այրել է նոցա կոպքերը, խարել է բոլորովին ու կարմրացրել է. այլ ևս արտասունք չեն թափում ողորմելիները, այլ ի խորոց սրտէ հառաջում են. թշուառականները՝ նոքա ևս որբացել են։ Ի՞նչ եմ ասում. երբոր մօտեցայ քու մօր դազաղին, նորա շուրջը շատ որբեր տեսայ, ամենքը յուսահատուած էին, ամենքը անմիջիթար ու տրտում էին։ Իայց ես շտապէցի, շատ առաջ գնացի. քեզ պէտք է ամեն հանգամանք կարգաւ հետզհետէ պատմել, որ այս տրտմալի անցքի վրայ լիակատար գաղափար ունենաս։ Կանցնին օրեր, կանցնին ամիսներ և տարիներ. տրտմութիւնը կփարատի, վշտի սուր փուշերը կգուլանան. ժամանակի հետ միասին և տպաւորութիւն և՛ յիշատակը աղէիորով պատահարին կանհետանան, կփարատուին և կմոռացուին . . .։ Իայց ես չուզէի այդ. ես կուզեմ քու սրտի մէջ կենդանի և անմահ թողնել մօրդ յիշատակը իր ամեն պարագայիւք։

Ըպրիլի 4-ին երեկոյեան դէմ, այսպէս ժամը 5-ին, գնացի բարեկամիս<sup>(\*)</sup> մօտ: Եղախինը ասաց որ տանը չէ. երբոր հարցուցի „ո՞ւր է“, ասաց որ՝ „մի հարուստ մարդու կին, որ այսօր յանկարծակի մեռել է, նա այնտեղէ:—Ո՞վ է մեռնողը, չգիտե՞ս, շարունակեցի ես հարցուփորձ: Եղախինը ասաց.—մի՞թէ ես չեմ լսած. մեռնողը իմ տան մօտերն է կենում. ի՞նչպէս կարելի է որ ես չիմանամ, մինչ բոլոր քաղաքը գիտէ այդ<sup>“</sup>: Այս խօսքերը լսելով, բնականապէս, հետաքրքրութիւնս կրինապատկեցաւ: Իմ դրացիիս տանը մեռել է պատահել և ես չգիտեմ. իմմոտանքս սկսաւ ինձ տանջել:

Ով որ ինձ ՚ի մօտոյ ճանաչում է՝ նա հեշտութեամբ կհասկանայ որ ես, թէե միշտ և անել քաղաքումն եմ կենում, բայց շատ բան ոչ տեսնում եմ և ոչ լսում եմ: Ես, ինչպէս յայտնի է քեզ, բոլորովին անձնատուր եմ եղած զաւակացս դաստիարակութեան և իմ սիրած պարապմանց, ամենեին ուշադրութիւն չեմ դարձնում ինչ որ չորս-կողմն պատահում է: Շատ անգամ մի ամիս անցնելէն յետ պատահաբար լսում եմ թէ՝ այս ինչ նշանաւոր մարդու տանը մեռել, ծնունդ կամ պսակ է պատահել, թէե հանգուցեալը, կամ բաղդաւոր հայրը կամ առաւել բաղդաւոր փեսան իմ մի ժամանակուայ բարեկամներն էին:

Խարեկամիս տնէն դուրս եկայ, որ իմ տունս վերադառնամ. բայց ճանապարհին նայում էի այս և այն տան վերայ՝ արդեօք չեմ նկատիլ մի արտաքոյ կարգի փոփոխութիւն: Խրբոր հասայ մեր փողոցի խաչ-ճամփան և ազքս բարձրացուցի ձեր տան վերայ՝ աղախինի ասածը ստուգուեցաւ, թէ, ոիմ դրացիներէն մէկին թշուառութիւն է պատահել<sup>“</sup>: Ձեր տան չորս-կողմը խուռն բազմութիւն էր ժողովված,

(\*) Գրեթե Ա. Խովենոս Ալուելին, որ ոչ պայման էնում՝ եր երիւ ժողով թագավորական հանդիպութիւնը:

փողոցում և ձեր բակումը դատարկ կամ լի կառքերը որը գալիսէին և որը հեռանում. ծառաներդ այլայլած դէմքով առաջ ու յետ էին վազում: Շուարած մնացի: Չէի համարձակում մինին միւսին հարցնել, թէ ով է մեռնողը, վախենում էի, մի՛ գուցէ այնպիսի մարդու անուն լւեմ, որոյ կորուստը ոչնչով պակաս չի պիտի համարէի իմ ընտանիքի անդամի կորստէն: Այս խօսքերս քեզ չափազանցութիւն չի պիտի երևի, եթէ միտքդ բերես, թէ ո՞րքան սիրում էի ես ձեր գերդաստանը, ոմանց քոյր, ոմանց եղբայր և շատերիդ իմ զաւակը համարելով:

Արտի տրոփով սկսայ բարձրանալու սանդուխքները և մոքիս մէջ աղօթքներ էի անում, որ մեռնողը այնպիսի անձն լինէր, որի մահը բնականապէս մօտեցած լինելով՝ անմիտիթար ափսոսանքի պատճառ չի տար: “Ներէ բացասրտութեանս. ես ուզում էի . . . . . եթէ միայն անգութ մահը ձեր գերդաստանէն անշուշտ մի զոհ պահանջել էր: “Նախասենեակին որ դահլիճը մտայ և սենեակի մէջտեղը սեղանի վրայ տեսայ ննջեցելոյ երեսը՝ մէկ բոպէի չափ ուշաժափ եղայ, աչքս մթնեց, ձեռք ու ոտքերս սաստիկ դողացին, լեզուս պապանձուեցաւ: Եթէ շուտով չերթայի նախասենեակ, ուր նատած էին հայրդ և ձեր մերձաւոր ազգականք, անշուշտ կիթալկանայի կընկնէի:

Ինձ որ տեսաւ հայրդ՝ միայն այս ասաց ուուերէն Յօտե ծոցո Ճօշուլ յ! Այս կարճ խօսքի մէջ պարունակուած էր խեղճի բոլոր կեանքի պատմութիւնը . . . , Ոչինչ միտիթարութիւն չունիմ տալու, ասացի հեծկտած ձայնով, եթէ ոյժ մէջէդ չի ստեղծես “ . . . և աւել ոչինչ խօսել չի կարողացայ: Աչքս որ չորս-կողմն դարձուցի՝ տեսայ մերձաւոր ազգականներուդ խոր սուզի և տրտմութեան մէջ ընկղմած. բայց մարդկային հնար և կարողութիւն չիկայ նկարագրել քու մեծ-հօր հոգեկեան վիճակը. էլ աչքից արտասունք չէին թափկում, ինչ որ

կար՝ ամենը թափել էր, արտասուաց աղքիւրը իսպառ ցամաքել էր, էլ նա յուսահատ և տրտմալից խօսքեր չէր արտասանում. ճշած սիրոը իւր ըոլոր ոյժը կորցրել էր. „ախ ախ. վախ վախ. վախ, պալամ վախ, աս ի՞նչ արիր“ այսպիսի կցկտուր, բայց բազմանշանակ միջարկութիւններ դուրս թափիւմ էին ողորմելիի սրտի խորքերէն: Այստեղ քարէ սիրս պէտք էր, որ համբերէր:

Ես նստայ հօրդ մօտ և մինչև խոր գիշերը չի հեռացայ նորանից, մինչև այնքան մնացի որ խեղճ մարդը, որ երկու գիշեր քնած չէր մօրդ տկարութեան միջոցին՝ պառկեցաւ բազմոցի վրայ . . . . բայց ես դարձեալ յառաջ վազեցի:

Նկատելու արժանի բան էր հօրդ հոգեկան վիճակը Ապրիլի 4-ին: Ես մի հոգեբանական զննողութիւն արի նորա վրայ: Դանի որ խօսակցութեան առարկան մայրդ էր՝ հայրդ միշտ ողեղվում էր, թէել լացը, արտասունքը, հառաջանքը անպակաս էին. այսու ամենայնիւ, մօրդ վրայ խօսք բացուելու միջոցին՝ նորա երեսը պայծառանում էր, աչքերը փայլում էին, լեզուն իւր սովորական ճարտարութիւնն էր ստանում, հէնց որ խօսքը փոխվում էր՝ հայրդ կորմնում էր աշխուժութիւնը, երեսի տիպարը զառամածի նմանութիւն էր առնում և բոլոր անձին վրայ նկատվում էր սաստիկ վհասութեան հետք: Այսուհետեւ ես որոշեցի յետագայ բանը. թէե ձեր ազգականք խնդրում էին ինձ չյիշեցնել մօրդ յիշատակը, բայց ես հակառակ այդ կարծիքին էի գնում, խօսքը անդադար մօրդ անցեալ և ձեր ապագայ վիճակի վրայ էի դարձնում, և նկատում էի որ մօրդ բարի յիշատակը և ձեր փայլուն ապագան խիստ հաշտեցնում էին հօրդ՝ իւր ներկայ աղետայի վիճակի հետ:

»Տ հարկ է, ասում էր հայրդ, կնոջս մեռնելովը ես չեմ մեռնիլ,

„վասն զի զաւակներիս վիճակը ինձ սրբազնն պարտաւորութիւն ազ-  
ողում է իմ կեանքը, որքան կարող եմ, երկարացնեմ, բայց յատկա-  
„պէս ինձ համար կորաւ կեանքի քաղցր վայելութիւնը: Ես այնքան  
,կելք և բանականութիւն ոնիմ, որ հաւաստի գիտեմ, որ իմ լարվ  
,և յուսահատուելով կինս յարութիւն չի առնուլ, և եթէ այսպէս  
„տրտմալի կերպով կեանքս շարունակեմ՝ իմ զաւակաց ապագան  
,կվամթարանայ, որ ես ամենեին չեմ ցանկանում և թոյլ չեմ տալ  
,այդպէս լինելու. բայց ես առաւելապէս նորա համար եմ ցաւում թէ  
,ինչո՞ւ իմ խեղճ կինը, կեանքի ամեն դառնութիւնը կրելով՝ նորա  
,քաղցրութիւնը վայելելու չի կարողացաւ. ես ցաւում եմ նորա կրած  
զրկանքի և տանջանքի վրայ“:

Յետոյ դառնալով գէպի իւր զաւակները, ասում էր. „Դուք մի՛  
„յուսահատուկք, սիրականներ, եթէ մայր կորուսիք՝ գո՞նէ ձեր հայրը  
,կենդանի է, նա կլինի այսուհետեւ ձեզ համար և՛ հայր և՛ մայր. բայց  
,ես, եմ լալուն և ցաւելուն, որ ամեն բան անդարձ, անմերա-  
„դառնալի կորուսի“ .... Եւ յետոյ սկսում էր քու մօր ներքին, ըն-  
տանեկան կենցաղը, վարքն ու բարքը, տան կառավարութիւնը պատ-  
մելու. յետոյ պատմում էր նորա գութը ամենի վրայ, յետոյ՝ անդուլ  
և անդադրում անձնազոհութիւնը իւր մերձաւորների համար. յետոյ  
պատմում էր նորա երեսունվեց ժամու մէջ հիւանդանալը և մեռնելը,  
միով բանիւ, անդադար պատմում էր մօրդ վերայ. խօսքը աղքիւրի  
պէս բղխում էր, երբէք միեւնոյնը չէր կրկնում, և այդպէս շարունա-  
կում էր ոչ թէ ժամեր, այլ ամբողջ օրեր, առաւօտից մինչև երեկոյ:


Ըհա՛ այդ կենդանի, անսուս, անկեղծ պատմութիւններէն ես  
կիսմբագրեմ և կյօրինեմ մօրդ կենսագրութիւնը քեզ և քու հարա-

զատներիդ համար, որն—ինչպէս ասացի—կմնայ կենդանի պատկեր ձեր  
անմահ յիշատակաց արժանի մօրը:

Այս ստորագրութիւնը, յուսամ, ձեզ համար մեծ արժէք կունե-  
նայ. դուք կտեսնէք, թէ ինչպէս մի հատիկ առաքինի կողջ վարքը  
կարող է բարերար ազդեցութիւն ունենալ բազմանդամ գերդաստանի  
ոչ միայն ներկայի, այլ և ապագայի վրայ, եթէ միայն նորա դորձքը,  
խօսքը կենդանի մնան:









## ՍԻՐԵԿԸՆ ՄՇԱԿՈՒ

Այս անգամուայ նամակս, յուսամ, թէև ըստ ինքեան տխուր է, բայց իւր ներքին բովանդակութեամբ բաւականին մխիթարութիւն կաղատճառէ քեզ, եթէ միայն մի առաքինի մօր կորուստ ունի որպիսի և իցէ մխիթարութիւն:

Այսօր կատարուեցաւ մօրդ փառաւոր թաղումնը: Թէև ես մտադիր եմ ստորագրել քեզ համար այդ տրտմալի յուղարկաւորութիւնը և կաշխատեմ որքան կարելի է ճիշդ նկարագրել այն անթիւ անհամար պատկերներն, որ հանդէս էին գալիս ինձ, բայց հազիւ թէ լիովին կատարելապէս հաղորդել քեզ այն, ինչ որ մեր ներսն էր կատարվում, ինչ որ ամեն մինս զգում էր իւր մէջ, ըստ որումմարդկային խօսքը գեռ ևս հասած չէ այն աստիճանի կատարելութեան, որ կարող լինէր ճիշդ հայելիացնել այն, ինչ որ աչքին, ականջին կամ մտքին է դիպչում: Ինչ և իցէ: Լսէ:

Ժամը 8-ին առաւօտեան՝ արդէն յուղարկաւորութեան ամեն պատրաստութիւնքը սկսան կատարուելու, տրտմալի զանգակահարութիւնքը քանի եկեղեցիների աշտարակներէ սկսան դօղանցելու, ասես թէ օդի մէջ ևս տարածում էին հօրդ սրտի թափիծը. ամպչովանին սեազգեաց ձիերով լծած՝ կանգնած էր ձեր տան առջև. քաղաքացիք՝ ծանօթք և անծանօթ, ծերք և տղայք, արք և կանայք առհասարակ մի առանձին, տենդայոյզ շփոթի մէջ էին. ամենքը մի բան էին սպասում.... Օդը արդէն գեղեցիկ գարնային էր: Գարունը, եղանակների

մէջ ամենագեղեցիկը, արդէն պատրաստ էր տօնելու իւր հանդիսաւոր գալուստը. մանիշակի բացուելու օրերն էին.... բայց դու տես որ՝ այն օր՝ այդ մարդկային մանիշակը, փոխանակ բացուելու իւր պարտիզել մէջ, իւր ընտանեաց մէջ, այն օր—կրկնում եմ—թառամել էր, զյուխը ծռել էր անզգայացել էր...

Վանի որ կենդանի եմ, երբէք չեմ մոռանալ այնօրուայ գեղեցիկ առաւօտը, այն տրտմալի ժամերը և այն մինը միւսից ծանր տպաւորութինները:

Ես արդէն ձեր տանն էի և հօրդ մօտ նստած, լեզուիս բոլոր ճարտարութինը, սրտիս բոլոր զգացմոնքը յօգնութեան կանչած՝ միսիթարում էի նորան. բայց հաւատացնում եմ քեզ, որ ոչ մի արուեստական խօսք, ոչ մի սուտ զգացմոնք չարտայայտեցի, թէև այդ մի հասարակեալ սովորութին է մեր մէջ այդպիսի դիպուածներումը: Եմ կարծիքով շատ յիմար և անպսուղ, մինչև անդամ, կարելի է առել վնասակար սովորութին է ստի միջոցով մարդ մասիթարելն: Ստախոսութինը ոչինչ արդարութին չունի, նաև եթէ մի գող արդարանար նորանով, թէ „ես գողութին արի, որ ընտանիքս կերակրեմ“: Դիտե՞ս ես ինչ ասացի և ինչ մինչև այժմ շարունակում եմ կրկնելու. այն որ՝ հայրդ պարտաւոր է ամեն հնար գործ դնել,—հնար որ նախապաշարեաներուն և տիրմարներուն միայն կարող է պախարակելի երեւլ,—որ իւր կեանքը երկարացնէ, իւր առողջութինը պահպանէ ձեր, այսինքն՝ նորա զաւակաց երջանկութեան համար: Ես ասում էի նորան „Դու իրաւոնք չունիս այսուհետեւ կեանքիդ օրերէն մէկը կարճացնելու ինչպիսի ուղէ գործի կամ զգացման համար. կեանքիդ ոչ միայն տարիները, այլ և ժամերը և բոպէներ պատկանում են քու մանր և թոյլ զաւակաց: Ինչ որ նորան ասացի ընտաներար, նոյնը կրկնեցի սուրբ

խորանի առաջեւ, բաղմութեան ներկայութեանը, վկայ բերելով Աստուածոդու սուրբ վարդապետութիւնը:

Ժամը 11-ի մօտ էր, որ հոգևորականք սկսան գումարուելու: Հայրդ, քոյրերդ և աղքականներդ զգացին որ հասել է վերջին բոպէն՝ մնաս—բարե ասելու իրանց թանկագին բարեկամին: Յանկարծ ամենի երեսի տիպարքը փոխուեցաւ, մի աննկարագրելի տրտում, անմիսիթար քողով ծածկուեցաւ. հասել էր այն օրհասական վայրկեանը, երբ որ ծնողը իրանց մի հատիկ աղջկանէն, հայրդ իւր սիրական կողակցէն, քոյրերդ իրանց մօրէն և կեանքի մի հատիկ բարոյական նեցուկէն պիտի բաժանուէին:

Զարմանելի բան է մարդուս սիրտը. երկու օր մայրդ արդէն մեռած էր. նորա հոգին արդէն հեռացել էր, միայն հողեղէն մարմինն էր մնացել իւրայնոց մէջ. այսու ամենայնիւ ընտանիք դեռ ևս մօտերը ունէին իրանց հարազատին. դեռ ևս նոցա տարարախոտութիւնը կատարեալ, ծայրայեղ չէր թէկուզ անկենդան, բայց մարմինը նոցա մօտ էր, թէկուզ մեռած, բայց երեխայք վրան էին նայում և „մայր“ էին ասում. հայրդ „Արբուհի“ ասում էր և վրան էր նայում, ձեռքով և շրմով շօշափում էր . . . դեռ ևս միսիթարութիւն կար: Իայց երբոր հասաւ այն օրհասական բոպէն, երբոր տունէն պիտի տանէին այն կնկան, որ քսաներեք տարի կառավարել էր այդ տունը, այդ տունը իւր անձնով և ոգուով լցրել էր, երբ ամեն անկինումը լսվում էր և կատարվում նորա իմաստուն հրամանը . . . խօսքս կրկնում եմ՝ երբոր հոգևորականք եկան, որ մօրդ մարմինը առյաւիտեան տանեն հողին աւանդելու, յանկարծ ամենքը մի բարոյական ցնցումն ստացան. ամենի աջքերը բացուեցան և տեսան որ „շուտով պիտի որբանան“: Աիրական Աարկոս, մի այն-

պիսի իրղալի տեսարան բացուեցաւ, որ ոչինչ մարդկային հնար չիկայ նկարագրելու. բայց ես յուսամ, որ դու հոգւով կհասկանաս....

Դեռ ևս հոգւորականք սկսած չեմ իրանց պաշտօնը, որ հայրդ կամեցաւ իւր զաւակներովը միասին վերջին համբոյրը տալ հանգուցեալին: Յանկարծ նախասենեակին ներս թափուեցան իննը հոգի մեծ և փոքր սեազգեաց, արտասուալից, տիրադէմ քոյրերդ. ներս մտած չի մտած՝ մի աղեխարշ կոծ ու կական, մի լաց ու գոռում, մի հեկեկանք ու հառականք բարձրացուցին, որ Աստուած հեռի անէ միւսանգամ այսպիսի մի բան տեսնելու ու լսելու, որը հօրդ փաժամթվում է „մամա“ է կանչում, որը մօրդ դագաղը գրկած՝ բաժանուել չէ ուզում, որի սիրտը անցնում է թալկացած ընկնում է, որը կուրծքն է ծեծում և մազերը փետփտում. ողորմելի հայր, շրջապատած անմիտթար քրոջներովդ՝ միանգամայն կորուց հոգու ներկայութիւնը. ինքը դագաղի առջև արտասունքը զսպելէ լէր կարողանում. այսուել առանց հովանաւորութեան, մօրից զուրկ մնացած մանր, հրեշտականաման երեխայր, շատերը հազիւ կարողանում են խօսք թօօմովելու „մամա մամա մամա“ են կանչում: Երեակայէ ձեր դաշկիճը, որ բաւական ընդարձակ է, լիքն էր մարդոցմով, որ ինչպէս կասեն „ասեղ ձգելու տեղ չիկար“: այդ բոլոր բազմութիւնը, վերը յիշած ալէտալի տեսարանը, միահամուռ սկսաւ լալ, ոչ այնքան մօրդ դագաղի վրայ, որքան քոյրերուդ անմիտթար և անտերունջ դրութեանը: Հա, սիրական Անրկոս, մարդուս կեանքումը կան այնպիսի տրտմալից ժամանակներ, որ բոպէի մէջ նորա զինու բոլոր մազերը ճերմկում են. այդպիսի բոպէներէն մինն էր հօրդ համար և այն բոպէն, երբ նա քոյրերուդ հետ վերջին մնաս բարեն ասաց հանգուցեալ մօրդ:

Հոգւոր պաշտօնը կատարելէն ետև՝ Փախալեան սարկաւազը կարդաց դագաղի առջև մի սրտաշարժ դամբանական. յետ այնորիկ սկսաւ յու-

զարկաւորութեան հանդէսը : Դադաղը փոխ առ փոխ տանում էին ոչ  
միայն մերձաւորք և բարեկամք , այլ և բոլորովին անծանօթ անձինք ,  
որ մարդկային վերջնն պարտքը հատուցանեն այն կնկան , որ յընթացս  
բոլոր կեանքին դադարած չէր ոչ միայն մարդապէս կենալու իւր և իւր-  
այնոց համար , այլ և մարդապէս ցաւակցելու՝ մարդապէս խնդակից լի-  
նելու ով որ միանգամայն դիպուած ունեցել էր թէկուզ հարեանցի սո-  
րան ճանաչելու : Այսպէս է հասարակաց կարծիքը : Հարիւրաւոր մար-  
դումէ լսեցի առ ի սրտէ „ողորմի հոգուն“ քու մօր համար , այնպիսի  
մարդոցմէ , որովք թերևս երբէք իոսած չէին նորա հետ , այլ միայն լսած  
սորա առաքինի վարքի մասին :

Յատկապէս մօրդ յուղարկաւորսլթեան համար Քիրմանէն բերուած  
զինուորական երաժիշտաները ծանր և տիրալի հնչեցուցին յուղարկաւո-  
րութեան Խորհ . բամաժիւ հոգևորականաց դասքը յամրաքայլ առաջ  
երժարով՝ տիրաշարժ եղանակով երգեցին պատշաճաւոր շարականները ,  
և սկսան երժալու դէպի Լուսաւորիչ մայր եկեղեցին , ուր արդէն  
պատարագն սկսած էր և պատարագին էր Գրիգոր Եպիսկոպոս  
Եղափիրեանը , որ ամբիոնի վրայէն յանպատրաստից ասաց մի բա-  
ւական երկար դամբանական , ուր անաշառապէս նկարուած էր մօրդ  
առաքինութիւնքն և հօրդ քաղաքական դործունէութիւնն : Եփառն որ  
այդ ճառը զրած չէր , որ ժամանակաւ կարող էր ձեր զերդաստանին  
շատ պարագայից մէջ պէտք գալ՝ իբր ապացոյց քու հօր հազուագիւտ  
արժանաւորութեանցը : Յետոյ ես կարդացի դամբանական ճառս :

Երբոր եկեղեցւոյ մէջ ևս ամենն հոգևոր պաշտամոնք կատարուեցան  
հանգուցեալ մօրդ վերայ նորից առաւ բազմութիւնը մօրդ պատուական  
մարմինը և իւր ձեռքի վրայ տարաւ մինչեւ հասարակական գերեզմանա-  
տունը , որ Լուսաւորչ եկեղեցին մօտ երկու վերսթա հեռի է . իսկ

դատարկ ամպչովանին գալիս էր յուղարկաւորութեան ետևէն : Վանիցս և քանիցս հանգուցեալի մերձաւորքն ինդրեցին զերմեռանդ ժողովրդին, որ իրան ծանրութիւն չի տայ, դագաղը դնէ ամպչովանիի վրայ . բայց բազմութիւնը ամենուն չյօժարացաւ, որ մօրդ մարմինը տարուէր կառ-քով . ամեն մարդ իրա համար պատիւ էր համարում քանի մի րոպէ տանել դագաղը : Հազիւ հազ ինքս պատիւ ունեցայ միայն մի անդամ տանելու, և այն՝ միայն քանի մի վայրկեան . — մինչեւ այդ աստիճան մեծ էր բազմութեան ջերմեռանդութիւնը դէպի ձեր գերդաստանը :

Եշրոր արդէն մօտ էինք գերեզմանատան դռնին, ևս ասացի հօրդ „Լամենում ես վերջին անգամ քանի մի րոպէ այլ ևս ընկերոջդ ծան-րութիւնը վրադ առնուլ“ : Փողձկաց հայրդ, և սրտից խոր հառաջելով ասաց „Եկրանի չէր լինիլ, որ մինչեւ վերջին շունչս կրէի նորա քաղցր թեռը“, և իսկոյն բռնեց ապրշումէ վարշամակի ծայրը, որով կրում էին դագաղը, և մինչեւ գերեզմանի եղերքը տարաւ :

“Կվատելու արժանի մի բան : Ուրիշ այսպիսի դիպուածներումը, այսինքն տիրապի յուղարկաւորութեան ժամանակ, շատ անգամ այն տները, որոց մօտից տանում են դագաղը, միշտ դիտողը (սէյիր անող) և այդ մանաւանդ կանայք՝ անտարբերութիւն ցոյց տալիս էին, բայց այս անգամ բոլորովին ուրիշ տեսարան էր . ամեն տան առջեւ, ամեն պատուհանից, ամեն փողոցներից, չնայելով ոչ հասակը, ոչ սեռը և ոչ ազգութիւնը, ամենքը եթէ ոչ տիսուր էին, գոնէ ծանր դէմք ու-նէին : Ոչ ոք չէր հարցնում, ինչպէս որ գրեթէ միշտ պատահումէ, „ով է մեռնողը“, վասն զի ամենքը արդէն դիտէին . ով դիտէ, թերևս շա-տերը ուղղապէս կամ անուղղապէս բարեպաշտ մօրէդ ստացած լինէին շատ կամ սակաւ օգնութիւն . միով բանիւ, եթէ ասեմ, որ մայրդ հետը տարաւ բոլոր քաղաքի ափսոսանքը՝ դու չափազանցութիւն մի համա-

թիւ: Թէկե ասստիկ տրտմութեան մէջ ընկղմած էր հայրդ, այսու ամենայնիւ նա չկարողացաւ չի նկատել այս պարագան և ասաց այս նկատելու արժանի խօսքերը. «Նյա ընդհանուր ցաւակցութիւնը դէպի ինձ ես չեմ մոռանալ. այս մարդոց մի ծանրակշիռ բարերարութիւն կանեմ»:  
Կատարուի<sup>9</sup> կամ չի կատարուիլ այս խոստումնը,—չդիտեմ, բայց ես վրկայում եմ, որ այս խօսքը եղաւ. վկայում եմ, որ հայրդ ազատորէն, պարզ մոքքով, անշփոթ արտարերեց. ես վկայ եմ և այն հանգամանքին, որ ընդհանուր բազմութեան յարդը, պատիւը, ջերմեռանդութիւնը և ցաւակցութիւնը անխարդախ էր թէ դէպի ձեր ընտանիքը և թէ դէպի քու հայրը:

Երբ սովորական կարգն ու ծէսը կատարուեցան մօրդ դագաղի վրայ, երբոր ետե ետեւէ երկու դամբանական ճառեր այլ ևս կարդացուեցան, երբոր ժամանակը հասաւ, ուր, ըստ աւանդութեան մեր եկեղեցւոյ, պէտք էր վերջին և ամենափառաւոր ծէսը կատարելու, այսինքն օրհնած հողը ամեն ազգակցաց, արենակցաց և բարեկամաց ձեռքով հանգուցեալի երեսին ածելու, մեծ-հայրդ դողդոջուն ձեռքով առաւ հողը, սիրտը անցնելով ածեց իւր թանկազին աղջկայ երեսին, ասելով «Նյա հողը դու պիտի ածէիր իմ երեսին, ի՞նչպէս եղաւ, որ այժմ ես կածեմ քու երեսին».... Ոչոք չկարողացաւ արտասունքը բռնել, ամենքը նորից բարձրաձայն լացին և մօրդ մարմինը հողին աւանդեցին:
















Иллюстрации А.Т. Фомы СУТАПАТА на Новикову пр. в Голландской деревне. С.П.Б.



## ՄԻՐԵԿԵՇՆ ՄԵՐԿՈՒ

Понятие о величинѣ получается  
чрезъ сравненіе. Аксиома.

Կարդալով լուսահոգի մօրդ թաղման նկարագրութիւնը՝ դու հաճութիւն  
ցայց տուիր կարդալ և ունենալ նաև նորա վարքը, ծնած օրէն սկսած  
մինչեւ աղէտալի և տարածամմահը: Յէկ և շատ դժուար էր ինձ կատարել  
քու իրաւացի ցանկութիւնը, այսու ամենայնիւ չկարողացայ մերժել  
քու խնդրոյ կատարումնը: Ցանկութիւնդ իրաւացի է, կրկնում եմ,  
բայց նորա կատարումնը՝ դժուար: Եմն մարդու բնական է ցանկա-  
նալ, որ իւր ծնողաց բարի յիշատակը անմահ լինի. բայց արի նայէ  
որ տամնապատիկ առաւել դժուար է նկարագրել մի մամնաւոր հա-  
սարակ մարդու վարքը, քանի մի աշխարհաքարոզ, հոչակաւոր դիւ-  
ցաղնի պատմութիւն: Մօրդ վարքը ստորագրելը դժուար չէր լինիլ,  
եթէ նորան ընծայէի այնպիսի որակներ և գործեր, որոնք անխտիր  
կվայելէին, և Աննային, և Անրիամին, և Լատարին, և Լղիսարէթին,  
և այնպիսի գործունէութիւն ընծայել նորան, որ ամեն կին անխտիր  
իւր կեանքի մէջ արած ունենայ, զորօրինակ ծնաւ, կեցաւ, եկեղեցի  
գնաց, զաւակաց մայր եղաւ, եայն, եայն. այո՛, այդ էլ կլինէր կենսա-  
գրութիւն, բայց այն չէր լինիլ, ինչոր ես և դու հասկանում ենք: ու-  
րեմն պէտք էր նկարագրութեան ժամանակ ուրիշ ճանապարհ բռնել,

քան թէ մինչև ցայժմ զանազան վարքագիրներ բռնել են։ Եհա՛, այդ տեղ էր ինձ համար ամենամեծ դժուարութիւնը։

Սուտ չէ. յաճախ երթևեկելով ձեր տուն՝ ես փոքր ի շատէ գիտէի մօրդ կեանքի մի մասը. յետ մահուան, սգոյ օրերը, ինչպէս սովորութիւն է, յիշվում էր լուսահոգի աստի կեանքի մանրամասնութիւնքը. նորա ծնողը, եղբարք, այրը, զաւակունք և բարեկամք մինչև այժմ կենդանի են. ուրեմն, կարծես թէ, դիւրին էր մտարերելով իմ տպաւորութիւնքը և ականջ դնելով այլոց պատմածքին՝ կարելի էր մօրդ վարքի նիւթը ժողովել. բայց մի մոռանալ, որ այդպիսի դիպուածներումը չափազանցութիւնը ոչ յետին գերը խաղալով՝ կարող է պատմաբանին մեծամեծ սխալանաց մէջ ձգել. բայց՝ դու ուզում էիր ունենալ ոչ մտացածին վէպք, այլ ճշգրիտ պատմութիւն քու հանգուցեալ մօրը։ Ինչ և իցէ։ Ափորձեմ քու իղձը և իմ առաջադրեալ դիտաւորութիւնը կարողութեանս չափ կատարել։ Նթէ մէջը սխալ կամ թերութիւն գտնես՝ այն էլ դու ինքդ ուղղէ և լցոնր։

ՄՐՈՒԱ ԵՐԱԿԱՆԵԱՆ ԽԸՆԹԱՅԱՆ ԾՆԱԱ 1835-ԻՆ ԴԵԿՈՒԵՄԸ. 21-ԻՆ։ Կորա մկրտութեան սուրբ ծէսը կատարեց Համբարձման եկեղեցիումն՝ Թաղեալու նուիրակը, որ այն միջոցին, եկեղեցական գործերու պատճառաւ, Կախիջւան էր եկել։ Ենունը Արբուհի կոչուելու պատճառն այն էր, որ նորա հայրը Եղիշ Պալատանէան, կամեցել է իւր սիրական մօր յիշատակը կենդանացնել իւր դստեր մէջ։

Հանգուցեալի մօրից—այսինքն քու մեծ-մօրից—լսեցի որ մայրդ ծնած բոպէին գուշակել է իւր ապագայ բախտը, նա աշխարհ եկել է ոչապիկով։ «կամ ծննդական թաղանթով»<sup>(\*)</sup>. այս դիպուածական պատահ-

(\*) Հայութիով, հնագույն թաղանթով ու իւրահանգույն թաղանթով է իւր ապագայ բախտը։ Ըստ հայութիով այս գուշակութեան է իւր ապագայ բախտը։

մունքը կրիսապատկել է նորա բարեպաշտ ծնողաց ուրախութիւնը։ Երբոր ես հարցուցի նոցա՝ արդեօք իւր մանկութեան օրերը լուսահոգի Արբուհին իւր դստերաց մէջ առաւել որին էր նման . մեծ-հայր և -մայրդ միաբերան ասացին , որ շատ նման է եղել քու Աանդուխտ քրոջ . ուրեմն դու լաւ կանէիր , եթէ վերջինի պատկերը , քանի որ տարիքը առնելով կերպարանափոխուած չէ , լուսանկարով հանել տայիր . այդ ժամանակ մօրդ երեխայութեան պատկերը անջնջելի կմնար ձեր ընտանեաց մէջ :

Վմենափոքրիկ երեխայական հասակէն մայրդ եղել է խելօք . բայց ոչ այնպիսի հասարակ խելք ունեցել է , ինչպէս որ նկատվում է ամեն երեխայի մէջ , ոչ . այլ սովորականէն դուրս : Երբէք ծնողաց սիրտը ցաւեցուցած չէ . իսկ եթէ , հակառակ նոցա կամաց արել է ինչ ինչ միշտ գտնել է հնար , ծիծաղեցնելով , զուարճացնելով՝ սիրտերը շահելու : Իւր ընկերակիցների հետ երբէք կռուած չէ խալի ժամանակ , թէկ իւր և նոցա բնաւորութեանց մէջ եղել է ահազին տարրերութիւն : Վայդ անուշութիւնով վարուելը մինչեւ ի մահ մնաց նորա մէջ : Մօրդ խստութիւնը դէպ իւր անձը և ներողամնութիւնը դէպի ուրիշները , ամենին զարմացնելին յետ , մինչեւ այժմ չի դադարում յիշել հայրդ , սրտէն խորին հառաջանք հանելով ու աչքէն արտասունք կաթեցնելով :

Խայրդ միշտ սիրել է ուսումն . սորան շատ ապացոյցներ պէտք չէ . միայն միտքդ բեր ինչպէս ուրախանում էր նա , երբ դուք յառաջադիմութիւն ցոյց տալիս էիք ուսմանց մէջ , և ինչպէս տիսրում էր նա , երբոր դասերդ սովորելու ծուլանում էիք : Միտքդ է , ինչպէս նա անդադար կրիսում էր „եթէ ես ուսեալ լինէի . . . ախ , ինչո՞ւ ես ուսեալ չեմ“ : Փեզ շատ լաւ յայտնի է իսկ , որ նա ձեր ուսեալ լինելու համար մինչեւ անդամ մայրական գութը զսպեց իւր մէջ , և

իւր երկու սիրական որդւոց իրանից հազարաւոր վեռաթերով հեռացուց (քեզ և Աշտթէոս Եղբօրդ): “Նմանապէս քեզ շատ լաւ յայտնի է, որ քու քոյրերը մէկզմէկէ գեղեցիկ են, այդ մայրոդ էլ գիտէր բայց մէկ օր լսած կա՞ս, որ նա պարծենար նոցա գեղեցկութեամբ .—երբէք. բայց մայրոդ ուրախանում և հրճվում էր, տեսնելով զաւակաց բարգաւաճելը ուսմանց մէջ: Ուրեմն մայրոդ ուսումնասէր էր և լաւ հասկանում էր մեր դարու ամենակարեւոր պահանջմունքը, որ առանց ուսման մարդս մարդ չէ և բաղդաւոր լինել չէ կարող: Զգիտեմ ասելէ արդեօք նա քեզ, բայց տեղեակ գիտեմ, որ նա իւր միւս զաւակաց անդադար կրկնում է եղել թէ „հօրդ փողի վրայ յոյս մի՛ ունենաք, փողը այսօր կայ, վաղը չիկայ, այլ ուսումն և գիտութիւն ստացէք. այդ գանձէն, ինչ անյաջողութեան և հանդիպիք՝ չեք զրկուիլ, միշտ ձեր վրայ կլինի“:

Այս խօսքերը մինչև անգամ լուսաւորեալ անգլիացի կողջ բերանէն լսեինք՝ նորա վերայ մեծ գաղափար կատանայինք, ո՞ւր մնաց մի պարկեշտ հայ, այն էլ նախիջնեանցի կողջ բերնէն լսելը: Ուրեմն, ինչպէս տեսնում ես, քու մայրը ի բնէ ունեցել է մեծ խելք և առողջ միտք:

Երկու տարի միայն սովորել է մայրոդ կարդալ-գրել Պօղոս քահանայ Ստեփանոսեանի մօտ, այսինքն տամնըմէկ տարեկանէն սկսած մինչ տասներեքը: Այսպէս կարճատև սովորելու համար չէ պէտք մեղադրել ո՛չ ծնողաց և ոչ վարժապետին, այլ այն դարը, ուր նա կեցել էր: Եթէ քեզ յայտնի չէ, գոնէ ինձ յայտնի է, որ եղել է ժամանակ, որ կանանց ուսումնառութիւնը համարուել է վտանգաւոր պարապմոնք՝ նոցա բարոյականութեան համար: Աեր ազգը մի փոքր կասկածու է: Ասում են թէ „ատենով ժամանակով“ թիմթանա թագաւորին օրերը—սատանային անկաճը խուլ—մի լուսաւորեալ կին կամ

աղջիկ մի օտար մարդու սիրատոմսակ է զրել . այդ խայտառակութեան զարհուրած՝ մեր պապերը հետևեցրել են այս, իրանց կարծիքով , անմերժելի ճշմարտութիւնը թէ՛ եթէ կինը կամ աղջիկը ուսեալ լինի անպատճառ օտար մարդու անպարկեշտ նամակներ կդրէ . և այդ վտանգէն ազատելու համար՝ կանանց սեռը միշտ հեռի պահել են ուսումէն : Եսյդ կերպով , քաղաքիս մէջ սովորութիւն եղած չէ աղջկանց երկարատե ուսումով զբաղեցնելու . ուրեմն , ինչպէս որ ուրիշները , այնպէս եղել են և քու պատուելի մեծ հայրը և մեծ մայրը :

Եհան պատճառը քու մօր զուրկ մնալուն ուսումէն : Իայց , ինչպէս վերը ասացի , քեզ յայտնի է , թէ՛ որքան նա յարգում էր ուսումը :

Անրդ վրայ ճիշդ գաղափար ունենալու . համար շատ մարդոցմէ հարց ու փորձ արել եմ նորա մասին . և այժմ ուրախութեամբ քեզ պիտի յայտնեմ որ՝ որին հարցուցի՝ ամենքը միաբերան այնպիսի լաւ բաներ պատմեցին , որ , յուսամ , դու էլ լսելով շատ գոհունակ կլինիս , վասն զի մենք միշտ սիրում ենք լսաւ բան լսել այնտեղ , ուր ամենակին չենք սպասում :

Շատերի միտն է քու մօր երեխայական հասակը , այսինքն 8-ը տարիէն մինչև 14-ը : Եսում են թէ՛ թէկ մայրդ . հիանալի գեղեցիկ էր (ինչպէս և մնաց մինչև վերջին օրը , և նոյն իսկ դազաղի մէջ պահպանեց իւր դէմքի հիանալի նկարքը) բայց երբէք եղած չէ պչող , անձնազով , ինքնահաւան , կոտրտվող . թէկ միշտ մաքուր , վայելուչ և գեղեցիկ էր հազվում , բայց երբէք եղած չէ պճնասէր . մինչև անգամ հայելիի առջև երկար մնալու՝ իւր գեղեցկութեան և զարդարանքի վերայ պարծենալով սէր և սովորութիւն ունեցած չէ . համեստութիւնը եղել է նորա բնածին արժանաւորութիւնը : Քեզ յայտնի է , որ այդպէս էլ մնաց նա մինչև վերջը :

Ասում են թէ երեխայութեան ժամանակ նա միշտ եղել է գթոս,  
ողորմած։ Ազքատը և մուրացիկը միշտ շարժել են նորա գութը, միշտ  
ողորմութիւն կամ որ և է թեթևութիւն ստացել են նորանից։  
Նա միշտ բարեխօսութիւն արել է ծնողաց առաջ նոցա մասին, եթէ  
ինքը իւր կողմանէ կարողութիւն ունեցած չէ բարեգործելու։ Երբէք  
արհամարհած չէ աղջիկ-ժողոտանքի (\*) կամ կոչունքի մէջ տնանկ  
ծնողաց աղջիկներուն։ Միշտ եղել է քաղաքավարի, մարդասէր և ներո-  
ղամիտ։ Քեզ յայտնի է, որ այս առաքինութիւնը քանի գնաց  
սաստկացաւ նորա մէջ վերջապէս քեզ այն էլ յայտնի է, որ նա ինքը  
իրան զո՞յ արաւ իւր մարդասիրութեանը։

Այսպէս, քու հանգուցեալ մայրը շատ առաքինութիւններ իւր մէջ  
անփոփոխ պահպանեց, որն որ ունէր իւր երեխայութեան օրերիցն սկսած։  
Ոչ տարիքը, ոչ կենաց փոփոխութիւններն, ոչ ձախորդութիւններն և  
ոչ յաջողութիւններն կարողացան խախտել նորա մէջ այն, ինչ որ նա  
մի անգամ համարել է բարի, առաքինի և աստուածահաճոյ։

Ես հարցուցի նորա ծնողներէն՝ արդեզք մայրդ ջերմեռա՞նդ էր դէպի  
եկեղեցին։ Նոքա ինձ պատասխանեցին, որ „Խկեղեցի ելումուտ անել  
թէև շատ չէր սիրում։ բայց խստիւ պահում էր կրօնի և եկեղեցւոյ մեր  
վրայ դրած ամենամանր պարտքերը“։

Դմաննալով որ ես մտադիր եմ մօրդ վարքը գրելու, մօրդ մօտիկ  
մարդիկ, կամնալով նորա սովորականէն դուրս գեղեցկութիւնը նկարա-  
գրելու, ինձ մանրամասնարար պատմեցին, թէ ի՞նչպէս մի օր “Սախի-  
ջեան եկել է ունախու ժա և թէ ի՞նչպէս այս վերջինս հիացելէ մօրդ  
գեղեցկութեան վրայ, ևայն։ Իայց ես ժպտելով լուսմ'եմ այն աննշան

(\*) Աղջիկ-ժողոտանք նոր հայութեանի ուղղակի ուղղութիւն է, որ հարմացակ իշխաններ հարցիրութեան անխոր  
նութեան և անառաջ, հարուս և ազքու ուղիւնք, գերշն անուս ուրախութեան, պատից մասնակտ առաջ, խուս  
հայք հան և վերցն Աստուածութեան առաջ իր ընկերութեան։

պարագայի և մնութի բաներու մասին . իսկ դու այսքան իմացիր , որ  
մօրդ գեղեցկութիւնը—որ անհերքելի էր—նորա ամենափոքր արժանա-  
ւորութիւնն էր , թէև գեղեցկութիւնն ես , ինչպէս և ամենայն արտա-  
քին չնորհ , Աստուծոյ պարզեն է : Շատ գեղեցիկներ եղել են աշխարհիս  
երեսին , որոնք կեցել են , կերել ու խմել են և վերջապէս մեռել են .  
մարդիկ շուտ մոռացել են նոցա : Իայց մօրդ ով որ միանգամ ձանաչել  
է հաւասար եմ որ էլ չի մոռանալ , քանի որ կենդանի է . մայրդ ուրիշ  
գեղեցկութիւն ունէր , որով նորա մօտաւորք , առանց ամաչելու , կարող  
են պարծենալ . այդ գեղեցկութիւնն է „Հոգւոյ գեղեցկութիւնը“ . այդ  
անմահ է , որ յետ մահուան եւս կմնայ նորա բարի յիշատակի հետ միասին :

Դու չես ասիլ , բայց ասողներ կդանուին թէ „Բ՞նչ այնքան գովելի  
բաներ արած ունի հանգուցեալը , որ ոչ թէ բերանով գովում են , այլ  
և աշխատում են նորա յիշատակը անմահացնելու կենսագրութեան  
միջոցով . ո՞ր վարժատունը շինել է , ո՞ր եկեղեցին շինել է , ի՞նչ ազգի  
օգտաւէտ գործ կատարել է , ի՞նչ ազգապարծանկը սիրագործութիւն  
կատարել է , ի՞նչ գիրք շարադրել է , ի՞նչ աշակերտ յառաջացուցել է“ :  
—Ոչ . համեստ և առաքինի Արբուհին եկեղեցի և վարժատուն շինած չէ .  
ազգօգուտ և սիրալի գործեր կատարած չէ . գիրք շարադրած չէ . աշա-  
կերտներ յառաջացուցած չէ : Իայց մի՞թէ բացի այդ գործերէն ուրիշ  
առաքինութիւննք չի կան , որք գովելի լինէին . պատմութիւնը և կեանքը  
մեղ ցոյց տալիս են , որ եղել են այնպիսի մարդիկ , որոնք հարիւր եկե-  
ղեցի քանզել են և մինը շինել են , հազար տուն կործանել են և մի վար-  
ժատուն շինել են . եղել են զբքեր շարադրողներ , բայց այդ գրքերէն  
մինչեւ այժմ թոյն կաթում է . եղել են աշակերտներ յառաջացողներ ,  
բայց այդ աշակերտք , հաւատարիմ մնալով իրանց վարժապետի բարոյա-  
կանութեանը , մինչեւ այժմ չեն դադարում քաղաքի հիմքը քայլայելու :

Իայց դուք գիտե՞ք, որ մի ուրիշ սխրագործութիւն կայ, որ թէե դիւցազնական չէ, այսու ամենայնիւ նորա աղղեցութիւնը և հետևանքը ոչնչով պակաս չէ, եթէ աւելի չլինի, այդ դիւցազնութիւնն է՝ կնոջ և մօր:

Ի՞նչ է կանչում մարդկութիւնը հազար միլիոն բերաններով մեր օրերումը: — „Տուէք մեզ մայրեր, տուէք մեզ կանայք“: Միթէ երեխայ ծնողներ չեն կա՞ն. միթէ արանց հետ եկեղեցումը միաւորվող կանայք չիկա՞ն: Կան այս էլ այն էլ բայց մայրեր և կանայք շատ սակաւ կան. այդ պատճառաւ ոչ միայն լուսաւորեալ լրոպան, այլ և Եմերիկան, Եւստրալիան և Շոխոյ մեծագոյն մասը յուսահատարար կանչում է „Տուէք մեզ մայրեր, տուէք մեզ կանայք“: Եկեղեցի շինեցէք բնաւ չէ կանչում. վարժատուն տուէք՝ շատ սակաւ. բայց պահանջածը մայր և կին է: Եժմ հասկացվել է և քաջ հասկացվել է, որ մարդուն ուղղելու, մարդուն բարոյական վիճակի հասցնելու համար, այո՛, մի փոքր օգնում են լաւ գրքերը, լաւ վարժապետները, լաւ վարժարանները և եկեղեցին. բայց ամենահզօր գործին մարդկան աղջը բարւոքելու՝ է—կինը և մայրը:

Արբուհի Խըլտմեանը էր արդարեւ առաքինի կին և օրինաւոր մայր:

Ուրեմն նորա վարքագրութիւնը, լինելով խրատական և օրինակելի, արժէ որ գրուէր բոլոր հայի համար. բայց ես ինձ շատ ստոր եմ համարում աղջի համար խրատական մի բան գրելու, իմ պարտքը առաւել համեստ է: Ես կամենում էի մի գերդաստանի մէջ անմոռաց թողնել մի համեստ կնոջ և մօր յիշատակ՝ ի մսիթարութիւն ոմանց և ի խրատ միւսոց, և այդ՝ շատ չափաւոր թուով մարդոց: Այրանից վեր չէ գնում իմ հեղինակական փառասիրութիւնը: Եթէ այդ առաջադրեալ նպատակիս համեմ՝ շատ գոհ կլինիմ ինքս ինձմէ:

Համեստութիւնը օրէ օր կորցնում է մեր մէջ իւր արժէքը. այժմ հայի կանանց մէջ համեստութիւնը կանացի արժանաւորութեան հա-

մարտումը չէ: Ա՞եր տեղ կը դովին առաջինը՝ հարուստ կնկան, երկրորդ՝ լաւ հազուող կնկան, երրորդ՝ լեզուանի կնկան, չորրորդ՝ շատ խօսող (լաւ է թէ վատ, այն էլ լշտուած գիտէ), հիւրերուն լաւ յարգինք անող կնկան....

Հայութ վա: Եթէ մարդը յաջողակ է՝ ուրեմն կինը հարուստ է. ուրեմն նա դովելի է (ահա մեր տեղի լօգիկան): Վայ եթէ յաջողութիւնը դադարի և ձախորդութիւնը սկսի, եթէ կինը աղքատանայ, ուրեմն ի՞նչ դովելու բան կմնայ: Ու, պարոններ և պարոնուհիներ, հարուստի կին լինելը դովելի արժանաւորութիւն չէ: Ո՞վ է ասում. հարատութիւնը լաւ բան է, բայց նա առաքինութիւն չէ և միայն նորա ունեցողը առաքինի չէ:

Հայութ վա: Լաւ հագուելու մէջ շատ պայմաններ կան, որոց ոչ մինը կնկան պատիւ չէ բերում. եթէ հալաւը և զարդերը թանկագին են՝ այդ հետևվում է մարդու հարատութենից և ոչ կնոջ արժանաւորութենից. եթէ հալաւի նիւթն է պատուական՝ այդ ֆարբիկանստի արժանաւորութիւնն է, և ոչ կնոջ. եթէ հալաւը լաւ ձեած և կարած է՝ այդ էլ ջնուդ գերձիկներու արտեստն է և ոչ կնոջ արժանաւորութիւնը: Աերջապէս, կնկայ հասակումը այնպիսի տարիք կան, որ հալաւի գեղեցկութիւնն էլ չի օգնիլ. այն ժամանակ կնկայ մէջ ի՞նչ կմնայ...

Հայութ վա: Ա՞եր տեղի լեզուանի կնկայ և լիբր կնկայ մէջ, ճշմարիտ պէտք է ասել, ոչինչ զանազանութիւն դտած չեմ, թէև շատ աշխատել եմ: Եղեսիդ ամօթը կօրցուր, խելքդ էլ մի փոքր թող թեթև լինի, լեզուիդ շափն էլ մի ճանաչիր—եղար լեզուանի: Այդ արժանաւորութիւնն է, այդ դովելի բա՞ն է:

Հայութ վա: Ես նկատել եմ—կարծեմ շատերն էլ նկատած կլինին—որ մարդ (մանաւանդ մեր տեղերումը) ո՛լքան սակաւ իմանայ, այնքան շատ կիոսէ. շատախիօսութիւնը նշան է սակաւիմացութեան,

այսինքն տգիտութեան։ Ո՞վ կհամարձակի հաստատել, որ տգիտութիւնը գովելի բան է։

Արդեն և յարեւանը<sup>(\*)</sup> ի՞ն Դուք լսե՞լ էք, որ մեր պատուելի ա……ցիք մի օր երեւելի հարուստներ էին. դուք լսե՞լ էք, որ նոցա հարստութիւնը նոցա կնանիք վատնեցին ղարլու-փլաներով և մուրարաներով։ Եթէ էրկանը (այր) տնանկացնելը, եթէ ընտանեկան վառարանը անցնելը զովանի բան է, ուրեմն այդպիսի կնոջ արածն էլ լաւ է։ Իայց ես չեմ կարծում, որ բարեխիղճ մարդը չյօժարի ինձ հետ, որ եթէ Նախիջևանցին, քանի որ ժամանակ կայ, չհրաժարուի իւր շոայլովթ ենէն, մի օր յետին աղքատութիւն և անհրաժեշտ սորիկութիւն պիտի հասնի նորա ոչ թէ թոռներուն, այլ զաւակներուն։

ԵՇԱ մեր տեղի նորաձև արժանաւորութիւնք կանանց, որոնք, ցաւելով պիտի խոստովանել, փոխարինեցին նախնի, մէկ ժամանակ զոված հայ կնոջ համեստութիւնը և տանտիկնութիւնը։

Ո՞չ, ո՞չ. ձեռքս սրտիս վրայ դրած պիտի խոստովանիմ, սիրական Անարկոս, որ քու լուսահողի մայրը այդպէմներից չէր. նա իսկական հայ համեստ կին էր. նա այն կիներէն էր, որ մեր սուրբ Խղիչէն յիշումէ իւր պատմութեան վերջին էջքերումն, որն կարդալով՝ ես երբէք դադարած չեմ լալու, մանաւանդ երբոր աչքիս առաջեւ տեմնում եմ նոցա թշուառական յետնորդներին։

Այս խօսքերն—կարող ես վստահ լինել և հաւատալ—շողոքորթութիւն չէ, այլ սրտի վկայութիւն։ Եթէ մայրդ կենդանի լինէր, ի հարկէ, իմբերանէն չէիր լսիլ այն, ինչ որ այժմ լսում ես. իսկ այժմ լսում ես

(\*) Այդ անց եացը յարեւ (որ մէկ պրոտոռաքանութիւն հայ հոգին) անձ նշանակութիւն ու թէ պրոտոռաք, ոյլ կուսանակնուն. և շաբաթ գործ խցնելու, պատու որ եթէ կը կը թէ նիւն ունչ ունի հոգին+ իոր, պատի հասկուոց, որ հուներ միշտ ինչու ու յառաջարտ ունչ նն զնոցել։

այն պատճառաւ, որ լուսահոգի մայրդ պատկանում է ոչ իրան, ոչ ծնօղներին, ոչ զաւակներին և ոչ ազգականներին, այլ պատմութեան, թէկուզ մասնաւոր, գերդաստանական պատմութեան. իսկ պատմութիւնը պահանջում է ճշմարտութիւն առանց աչառութեան:

Ծնկերակիցք միշտ սիրել են մայրդ՝ նորա խաղաղասէր բնաւորութեան համար, ուր որ եղել է մայրդ՝ այնտեղէն հեռի են եղել կոիւ, երկասակիութիւն, բամբասանք, չարախօսութիւն, բծախնդրութիւն և այսպիսի տնալքանդ, սառնութիւն և ատելութիւն ծաւալող ախտեր: Ո՞ւր ազգը դեռ ևս լուսաւորութեան ամենաստոր աստիճանի վերայ է: Եթէ մեր օրերը տեսնում ենք նորան այդ աննախանձելի վիճակի մէջ, ուրեմն որքան օտար պիտի լինէր նորա ընտանեկան ներքին առաքենութիւնը 25—30 տարի սորանից առաջ: Ի զուր կարծվում է, թէ, ասիական սովորութեամբ, կինը մեր ազգի մէջ լուռ, անտրատունջ, կամքէ և ազատութեան զրկուած արարած է. որքան որ կինը, ըստ երեսութիւն, անգործունեայ է քաղաքական գործերումը, այնքան նորա չար բազդի ստորերկեայ ազգեցութիւնը մեր ազգի վերայ անհերքելի է: Եթէ մեր օրերումը ակներև տեսնում ենք այս իրողութիւնը, իմացիր որ հին ժամանակներումը նոյնն էր, եթէ ոչ աւելի: Ենհամար ազգային առածներ, ուր անդադար յիշվում է անզգամ կնոջ անունը, ցոյց են տալիս, որ կինը անգործունեայ կեանք անցուցած չէ հայկական կեանքի մէջ: Բայց երանի թէ այդ գործունէութիւնը լինէր օգտաւէտ, բարերար. բայց հետեանքը ցոյց տալիս է սորա հակառակը:

Աիրական Մարկոս, եթէ Ըստուած տայ, մի օր զու և եղբայրդ լինիք օգտաւէտ քաղաքացիք, ամեննեին չմոռանաք որ այդ երջանկութեանը ձեզ հասցնողն էր ձեր լուսահոգի մայրը: Դու տեսնումես չորս կողմէ շատ հասակակիցներուդ, որնք, ըստ երեսութիւն, գրեթէ

նոյն պայմաններու մէջ մնել և զարգացել են . նոցա ծնօղը դրեիթէ նոյն խնամքը տարել են և տանում են նոցա լուսաւորութեան վրայ , բայց շատերը ընկան ուղիղ ճանապարհի վերայ . դեռ ևս ապագան ցոյց կուտայ թէ շատերը ի՞նչ վիճակի կհանդիպին : Աորա միակ պատճառը այն է , որ նոքա , այսինքն ընկերակիցքդ , զուրկ եղել են դաստիարակութենէ . իսկ դաստիարակութինը մեր մէջ միայն մօր ձեռքումն է . զոնէ մինչև այժմ այդպէս է եղել : Քեզ յայսնի է , որ շատ հայրեր , իրանց գործերի պատճառաւ , տարուայ մեծագոյն մասը քաղաքէն միանգամայն դուրս են անցնում իրանց ժամանակը . իսկ միւս մասը եթէ իրանց կրպակներումը չլինեն՝ անշուշտ փողոցների անկիմներումը գեղերում են , կամ ուստի թուղթ են խաղում և կամ իրանց նմանների հետ գինիի շիշի և լուսած առջև նատած՝ հայէ բամբասանքն են անում : Ուրեմն , հարկաւ երեխայք մնում են մօր ինամքին : Ուրեմն մօր ազդեցութինը թէ իրատով , թէ օրինակով և թէ վարքով , մնում է զաւակաց համար անժխտելի :

Անյրդ եղել է իւր ծնօղաց մի հատիկ դուստրը . թէ և նոքա որդիք ունեցել են — և այժմ ևս ունին — բայց բացի մօրէդ՝ ուրիշ դուստր ունեցած չեն : Այս պարագան այն մասին յիշում եմ , որ մայրդ լինելով իւր ծնօղաց միակ դուստր՝ հարկաւ նոցա , ինչպէս ասում են , „աչքի լոյսը“ պիտի համարուէր , որ այդպէս էլ եղել է . նորա խոնը չկոտրելու համար , նորա սիրութ միշտ ուրախ պահելու համար ոչինչ ինայած չեն : Եհա քեզ լայն ասպարէզ բարոյապէս խեղուելու մի հասարակ խելքով աղջկայ , վասն զի ի՞նչ առաւել ապականում է երեխայի բնաւորութինը , քանթէ հօր և մօր երես-տալը : Թէև մայրդ , բազդի բերմամբ , այդ վտանգաւոր դրութեան մէջ է եղել , բայց նա , արտաքոյ սովորական երեսութին , մնացել է բարոյական և առաքինի , ոչ

պճնասեր, ոչ ինքնահաւան, ոչ կամակոր, ոչ չարախօս, ոչ այպանող, ոչ պարծենկոտ, ոչ անգութ՝, ոչ անկրօն, ոչ մնոտիապաշտ:

Դիտե՞ս - իորհ, ես ձեր տունը յաճախ ելումուտ էի անում, ուրեմն փոքր ի շատէ ճանաչում եմ ամենիդ բնաւրութիւնը: Իայց ես այս ուժ տարուայ մէջ ձեր տան մէջ տեսնում էի այնպիսի կարգ, կանոն, մնական աւանդութիւնք, մարդավարութիւն, որն վայել էր մի լուսաւորեալ ազգի ընտանեաց: Այդ ամենը քու մօր ազգեցութեամբ էր, և ոչ ուրիշ պատճառէ: Ես չէի զարմանալ, եթէ քու ծնողը ստացած լինէին մի լուսաւորեալ աշխարհումը կամ քաղաքումը կրթութիւն, և կամ մնած լինէին լուսաւորեալ ընտանեաց մէջ: Բայց մոտք գուշակել արգասիքը լուսաւորութեան, խսկապէս լաւի և լաւանմանի մէջ խարութիւն անել,—ահա որտեղ է պէտք կնոջ առողջամտութիւնը, կնոջ խելքը և կանացի բարինութը: Եւ մայրդ ունէր այդ խելքը, այդ առողջամտութիւնը և այդ հազուազիւտ կանացի բարինութը:

Երկու տողի մէջ երկու անգամ կրկնեցի խօսքս „կանացի բնատինկու“ և այդ՝ գիտութեամբ: Կեանքի մէջ մեղ շատ անգամ պատահում է տեսնել խելօք, խոհեմ այր մարդ, որ միշտ իւր գործը, իւր պարտաւորութիւնը կատարում է սրբապէս. եթէ մէկ խոստմոնք է անում ճշգիւ լրացնում է, եթէ մէկ գործ է սկսում՝ ճշգիւ վերջացնում է, վրան-զլուխը միշտ մաքուր է. հալաւի և շապկի վերայ ոչ մի արատ չի կայ. վարմոնքի մէջ ոչ մի սիրալ չի կայ, ասես թէ նորա ամեն քայլափոխը հաշուած է. նա ոչինչ չի ձեռնարկում առանց հասուն խորհելու. շատ սակաւ ժպտում է, այլ յաճախ նորա երեսը ծանը է, տիպարքը խոժոռ: Այդպիսի մարդուն մննք սովորաբար խելօք ենք ասում, և խսկապէս այդպէս էլ է եթէ կամենաս դու երեակայէ այժմ այդ մարդու տեղ մի կոիկ, և կտեսնես, որ այդ կնիկը մի անտանելի,

ատելի արարած կլինէր գերդաստանի մէջ։ Տան ծառայք նորան չէին սիրիւ, այլ միայն կզարհուրէին. այդպիսի կնկայ զաւակները, զբեթէ օրորոցի մէջէն, զրկած կլինէին երեխայական կայտառութենէն, ուրախութիւն, ցնծութիւն, բերկրանկ անծանօթ կլինէին այդպիսի երեխայոց. դրացիք զարհուրելով ցոյց կուտայն այն տան վրայ, որի մէջ կենում է այդպիսի կին։ Գիտե՞ս, այս համեմատութեամբ ի՞նչ ուղացի քեզ հասկացնելու. այն որ խելօք կինը ուրիշ ձև պիտի ունենայ, խելօք մարդը՝ ուրիշ եթէ այր մարդը (երիմարդը) բնութեամբ և խելքի կերպով նմանի կնոջ (կնիմարդ) ծիծաղելի է. խսկ եթէ կինը նմանի այր մարդուն ատելի է։ Այստեղ կանացի ինստինկտը օգնում է կնկան խելօք, խոհեմ, առողջամիտ լինել, բայց կանացի կերպով։ Ահա այդպիսի ինստինկտ ունէր քու մայրը։

Պատահում էր այցելութեան գալիս էի հօրդ (օտար կանանց հետ նստել-ելլելը, ինչպէս զիտես, մեր մէջ գեռ ևս սովորական չէ). Երբ ներս էի մտնում՝ արդէն մի առանձին մթնոլորտ պատում էր ինձ. թէ տան բռնուածքը, կարասիքի դասաւորութիւնը, թէ երեխայոց հագուածը, քալուածքը, շարժուածքը. թէ սենեակների մաքրութիւնը, և թէ նաժիշտների ներս մտնելը և դուրս երթալը, ամեն բան. ամեն բան ուրիշ ձևում ունէր, ամեն բանի մէջ նկատվում էր մի աներեղիթ ձեռք, որ այն ահաղին մեքենան, որ տնտեսութիւն է ասվում, ինչպէս ներդաշնակ երժաշտութիւն կառավարվում էր. այդ աներեղիթ կառավարիչ ձեռքն էր քու մայրը։ Այդպիսի խոհեմ տան-կառավարութիւն, այդպիսի իմաստուն տնտեսութիւն, վերջապէս պիտի խոստովանել, սերտելու և սովորելու բան չէ, այլ Աստուծոյ նորհներէն մինն է, որ նա պարզեռում է իւր ընտրեալներուն. այդ մի առանձին գաղտնիք է։ Զգիտեմ, մայրդ մեռնելէն առաջ հաղորդեց արդեօք իւր դստերաց այդ

զաղանիքը։ Եկանի՛ թէ հաղորդած լինէր և հետը անդարձ չի տանէր....

Ես հարցուցի քու մեծ հօրը՝ արդեօք ողորմած - հոգի Արբուհին, երեսայութեան ժամանակն ես այդպէս „տանտիկի՞ն“ էր. ասաց այս, միշտ այդպէս էր։ Չեմ կարող չի հաւատալ, վասն զի ես չի տեսայ ձեր տան մէջ այնպիսի անձինք, որոնք կարող լինէին այդ մնտեսութեան զաղանիքը սովորեցնելու քու մօրը։ Եհաւ, յետ մահուան նորա անցան արդէն երեք ամիս, դարձեալ յաճախում եմ ձեր տուն. բայց արդէն չեմ նկատում առաջուայ ցոլքը, առաջուայ փաղփինը, առաջուայ կենդանութիւնը։ Եյու, տեսնում եմ կարգ, կանոն, մսկրտութիւնը, բայց առաջուանը չէ, առաջինին նման չէ. ամենաշնչին բանի մէջ նկատելի է մօրդ բացակայութիւնը. ամեն բանի մէջ երեսում է կամ վարձկանի կամ անփորձի ձեռք։

Եռ ձեռքդ երկու իրեղէն, մինը արծաթէ, միւսը արծաթաջրած. և կտեսնես որ՝ արծաթ ջրածը թէև նոյն սպիտակութիւնը, նոյն ցոլքը ունի, նոյն ծառայութիւնը կատարում է, բայց նոյնը չէ. ասես թէ մէջը մի բան պակաս է, ասես թէ մինը կենդանի է, իսկ միւսը՝ մեռած։

Երդարև, պիտի խոստովաննել, մեծ և անփոխարինելի է հօրդ կորուստը. իսկ մանր քոյրերիդ համար, որոյ անհրաժեշտ պէտք էր մօրդ կեանքը, գննէ մինչև նոցա 13—14 տարեկան հասակը, ևս լուսում եմ, լեզուս պապանձվում է.... միայն աչքերս գէպի երկինք ամբառնալով ասում եմ „որբերի տէրը Եստուած է“ աւել ի՞նչ ասեմ։

Օրիորդ Արբուհին հաղիւ իւր կենաց 15-ամեայ հասակը մտել էր, որ մեծ մայրդ տեսնելով նորան՝ շատ հաւանում է և իւր միակ որդու համար հարս է ընտրում։ Եռաջուայ սովորութեամբ հօրդ յօժարու-

թիւնը<sup>(\*)</sup> գրեթէ այն ժամանակ հարցնում են, երբոր ծնողք իրանց մէջ աւարտում են իրանց հարկաւոր պայմանները: Տասնևվեց տարին չի լրացած Արբուհի Պալապանեանը ամուսնանում է հօրդ 1851 թուին:

“Եսին տարին Յունիս ամսու մէջ ես, Թիֆլիզէն Պետերբուրգ երթալիս, հանդիպեցայ Նախիջևան: Գնացի հօրդ տեսութեան: Հայրդ (այսօրուայ պէս միտս է) ընդունեց ինձ ձեր Դիմուած ասած սենեակումը: Զգիտեմ ինչպէս եղաւ որ՝ մայրդ ներս մտաւ. ես նորան չէի ճանաշում. մի փոքրիկ, քնքոյշ գեղեցիկ աղջիկ տեսայ. երբոր գնաց՝ հարցուցի հօրդ „այս ովկ է“: Հայրդ կարմրելով ասաց „կինս է“: Եթէ չեմ սխալում, 1851 թուին մայրդ նման էր քու Մարիամ քրոջը. բայց թող ներէ ինձ քոյրդ—առաւել գեղեցիկ. մօրդ տիպալքը մանր, քնքոյշ և ինչպէս ասում են „նախշուն“ էին:

Կրորոր մօրդ դագաղի առաջն տեսայ մեծ մօրդ, իսաթուն Հեղինեին յուսահատ դրութիւնը, երբոր լսեցի նորա աղեխորով լաց ու կականը, իւր թուներու վրայ անմիտար սգալը,—քան զայս ի՞նչ աւելի ասպացոյց պէտք էր, եթէ մի մարդ հարցնելու լինէր „արգեօք. լուսահոգի Արբուհին իւր սկեսուրի համար եղե՞լ է լաւ հարս“ յլնթացս 23 տարուան: Եթէ ինչ ու ինչ պատահած և լինէր նոցա մէջ, այդ առաւել պիտի վերաբերել դարու պակասութեանը, քանիթէ ում և իցէ բնաւորութեան թերութեան: Անացածի վրայ համեստութեան քոյծածկենք. գերդաստանը մի սրբարան է, ուր ամեն աչք չի պիտի թափանցէ: Հասկացողին այս էլ բաւական է:

(\*) Հայ երեսներն և մահանելու այժման հասկցութեամբ, ոյս մի բարբարական հ. Տայրուշն իշխանութիւն է. բայց Արքանման մեջ հարկածն երբեմ պարագութիւն ունի, մի որ՝ զարգացած առանձիւթիւն է, որի նորուած կորուս է պատճենավորացչի մէջ և երեսու գործիւն է պատճենիւն որովայ և իցէ անցարաբարելին. զամաց չի ձնուց մինչ և մասս ունենի իրակ ըստակ հաշուն է. հասկացութիւն. Այսու—առնելին, մի ժամանակական անելույթ և անցրադրույթ է:

Կուսահոգի Խղբտմեանը ինչպէս մայր և ինչպէս դաստիարակիչ երևելի և կարելի է ասել միակ էր իւր տեսակի մէջ. բայց նորա ազդեցութիւնը զաւակաց վրայ—զարմանալի երևոյթ է այդ—ոչ դառն եպերանքով է կատարուել, ոչ սաստիկ գանով և ոչ, վերջապէս, երես տալով, լրբացնելով, այլ մեղմ, աղդու և խոհեմ հնարիներով, որ նմանապէս պիտի կարծել, նորա սեպչական դաստիարակչական գաղտնիքն էր: Պտուղէն ծառը կճանաչուի, ասում է առածը: ‘Նայէ այս տամներկու հրեշտականնան, պարկեշտ, համեստ, մարդավարի, քաղցրաբարոյ, ամօթիած, խելօք երեխաների վրայ՝ 22 տարեկան հասակէն մինչև 2 տարեկանը, և ամենի վրայ կտեսնես մի մի հետք իրանց առաքինի մօրից, իրրեանձողագրելի օժիտ, մնացած: Այրդ զարմանում է, երրոր նայում է այս փոքրիկ քօլօնիայի վրայ, զարդարած պէսպէս առաքինութիւններով և արժանաւորութիւններով. ամաչելով երկմոռում է մորումը „Իրա՞ն հայ են արդեզք դոքա, թէ դրսից գաղթած օտարազգիք (այլազգիք)“.

վասն զի մնաք միշտ սովորել ենք հայ ընտանիքի մէջ միշտ պէսպէս անհարժութիւններ տեսնել: Դիտեմ, այս սրտարացութիւնս պիտի գրգռէ մերայնոց անձնասիրութիւնը. բայց ի՞նչ անես, ես սովորել եմ ճշմարտութիւնը առանց քօլի յայտնելու:

Խնչպէս քեզ յայտնի է, սիրական Անրկոս, որ ես զրեթէ օ տարի վարժապետութիւն արի ձեզ, դուք էլ մի ժամանակ երեխայ էիք. պատահէլ է մի օր, որ ես որիդ և իցէ յանդիմանէի որ և է ամօթալի գործի կամ խօսքի համար: ստախօսութիւն, չարակամութիւն, նախանձ, բամբասանք, քսութիւն—այս սավորական մոլութիւնքը մեր երեխաներին, ձեզ միանգամայն անյայտ էին. Եթէ ուրիշներին պատիժն անգամ ոչինչ չէր աղբում, ձեզ բաւական էր „ամօթ ամօթ“ ասէի, որ երեխներդ շառագնէր և աչքերդ արտասուէր: Այս այնպիսի յատկու-

թիւններ են երեխայի մէջ, որ ոչ գրքից է սովորվում և ոչ իրատով աղդվում, այլ առջևը կեցած նախագաղափարէն օրինակվում։ Արեխայր ծնողաց հայելին և արձագանքն են, ինչոր ծնօդը կանն և կասեն, նյնը որդիքը կը կրկնեն։ Այս վաղուցուայ նկատած ճշմարտութիւն է : Անսակի մեծ է մօր ազդեցութիւնը զաւակաց վրայ և գրեթէ առյափառեան անջնջելի։

Ընդ ամենը Արբուհի Խլըտճեանը ունեցել է 14 զաւակ, որոցմէ 12-ը այս օրս կենդանի են .—Երկու դուստր, շատ փոքր հասակներումը, թաղել է—։ Այդ 12 հոգիէն տասը աղջիկ են, երկուսը տղայ։

Առիգիսիմէ	22	տարեկան	Եշինէն	13	տարեկան
Աեղինէ	21	"	Եշուինէ	11	"
Մարիոս	20	"	Տիրուհի	10	"
Կունէ	18	"	Փերբոնէ	8	"
Մատթէոս	17	"	Քրիստինէ	6	"
Մարիամ	16	"	Մանդուխտ	2	"

Ես շատ կամեցայ իմանալ՝ արդեօք ողորմած-հոգին ուներ այն, ամեն մօր ներելի թուլութիւնը, որ է իր զաւակների մէջ մէկին սիրել առաւելապէս և միւսին՝ պակաս։ Օճանագան մարդիկ զանազան պատասխան տուին . բայց նոցա պատմածքէն ես եղրափակեցի որ՝ լուսահոգի մայրդ գէպի քեզ, եթէ ոչ սէր, գոնէ առաւել քնքուշութիւն է զգացել, քանթէ ուրիշ զաւակներուն, և սորա պատճառը եղել է քումանկական հասակիդ թոյլ կազմուածքը։ Եւ իրաւունք ունեցել է։ Կնկայ սիրառ այդպէս է ստեղծած, կինը միշտ պաշտպան և հովանաւորիչ է տկարներուն։ Այս հանգամանքը ես քեզ կմեկնէի, եթէ վստահ չկնէի, որ ինքդ այսօրս կենալով լուսաւորեալ քաղաքում, ելումուտ անելով լուսաւորեալ ընտանիքներ՝ այս բանը, ամեն քայլափոխիդ,

նկատած չլինէիր : Այդ յատկութիւնը կնոջ, այսինքն՝ հովանաւորել և պաշտպանել տկարներուն, սեպհական է միայն բարոյական, Եստուծոյ պատկերով առեղծած լուսաւորեալ կնկան, և ոչ անամնաբարոյ և մարդապատկեր էակներուն : Այսայն Քրիստոս իւր մօտ կանչեց անխոտիր ամեն երեխերքին և օրհնեց նոցա . միայն Քրիստոս էր, որ իւր Եստուծածային հովանաւորութիւնը շնորհեց հիւանդներին, տկարներին և ախտաժէտներին :

Ե հարկ է, մայրդ, զթալով քու տկար կազմուածքի վերայ և, ինչպէս ասում են, ամեն բոպէ դողալով քու կեանքի վրայ, իրա համար սովորութիւն արաւ քեզ մեղքանալը, խնայելը, պահպանելը և պաշտպանելը : Դու գիտե՞ս, կնկայ և այդ մանաւանդ բարեսիրտ կնկայ մէջ շատ փոքր անջրպետ կայ գութի և սէրի մէջ. կնկայ լեզուով մեղքանալը նոյնն է սիրել, և սիրելը նոյնն է մեղքանալ : Ճամանակաւ այս իուսքերա առաւել կպարզուին քեզ համար, եթէ այժմ կամ մուգդ հասկանաս, կամ ամեննեին չի հասկանաս . կենաց փորձը ցոյց կուտայ, որ այդ իրողութիւնը կայ, բայց միայն բարի, աղնիւ, զթուտ կնկայ մէջ :

Քեզ յայտնի է, որ մայրդ կեանքի վայելք շատ տեսած չէ, ինչպէս որ ասում են, նա իրա համար կեցած չէ, այլ մեծագոյն մասը նորա կեանքին զոհած է եղել մասսամբ ձեր հոգոր տանելով, մասսամբ տան կառավարութեան և մասսամբ ես ձեր մերձաւոր ազգականներին և բարեկամներին պէսպէս մանր և խոշոր ծառայութիւններ կատարելով : Շատ անգամ ասում է եղել հայրդ „Եյս դու մինչեւ Ե՞րբ ուրիշների համար պիտի կենաս . Ե՞րբ պիտի սկսիս արդեօք քեզ համար ապրելու, կեանքի վայելքը տեսնելու“: Ողորմած-հոգի մայրդ սովորաբար պատասխանում է եղել „Փոքր էլ սպասէ . թող Անրկոսը աւարտէ ուսման ընթացքը . այն ժամանակ ես կսկսիմ կեանք վայելլու“: Որքան հաւատ դէպի

“ Ապիախնամութիւնը վերը, ո՞րքան յոյս Վատուծոյ վրայ և ո՞րքան սէր դէպի իւր զաւակը : Դու տեսնում ես թէ մինչև ո՞ր աստիճան կատարուեցաւ խեղճ մօրդ փայլոն յոյսերը :

Եյս յիշատակներովը դու մի՛ տրտոմիլ, յիշէ՛ Քրիստոսի առակը թէ „Մինչև որ ցորենը չի մեռնի՝ արդինք չի տալ“ . նոյնը հասկացիր ձեզ համար մօրդ առաքինի կեանքը և մահը, որն եթէ դուք—նորա զաւակունք—ուշի ուշով սերտէք՝ ձեզ միշտ փրկաւէտ կլինի ձեր ապագայ կեանքի մէջ :

Գիտեմ, պիտի ասես „Խ՞ոչ շահ իրան հանգուցեալին, որ նա զո՞ցնաց իւր ծնօղական, ամուլմական և մարդկային պարտքը Ճիշդ կատարելովն : Ես յանձն չեմ առնում պատասխանել. դորա պատասխանը պիտի որոնենք մեր սուրբ կրօնի մէջ, վասն զի այդտեղ վերջանում է մարդկային խելքի ասպարէզը և սկսումէ Վատուծոյ Կախախնամութեան շակիղը :

Հօրդ ասելովը, ձեր ընտանիքի մէջ հետզետէ երկու յաջողութիւնք պատահած չեն . եթէ այսօր մի բանով ուրախացել էք, անշուշտ վաղը մի ուրիշ բան տիրացրել է ձեզ. եթէ այս տարի հօրդ առևտրական գործը ուրպիսի և իցէ յաջողութեան է հանդիպել, հետեեալ տարին անպատճառ մի ծանր ձախորդութիւն է եկել, այնպէս՝ որ մայրդ երբէք երկարատե տարիներ շարունակ ուրախութիւն, անդորրութիւն վայելած չէ : Երկու սոսկալի, քստմելի ընտանեկան տարաբաղդութեան դու ինքդ ականատես վկայ եղար. իւրաքանչիւրը այդ տարաբաղդութիւններէն բաւական էին յուսահատեցնելու, ընկճելու մի հասարակ խելքի տէր կնիկ . բայց քու մայրը այդ ամենը խոհեմութեամբ և խսկական քրիստոնէավայել համբերութեամբ տարաւ : Զախորդութիւններէն մինը արդէն բարւոքուել էր, միւսը բարւոքուելու վրայ էր. մօրդ ուրախութիւնը

չափ չուներ. վերջապէս, յետ 23 տարուայ տաժանական կեանքին, նա ասես թէ արդէն ձեռքը երկնցրելէր, որ իւր բաղդը բռնէ, և յանկարծ... Աստուծոյ անճառելի կամքը կատարեցաւ:

Ասացի—հօրդ խօսքերը կրկնելով—որ ձեր ընտանիքէն թէ մանր և թէ խոշոր ձախորդութիւնքը երբէք պակասած չեն. այսու ամենայնիւ, ես երբէք տեսած չեմ մօրդ երեսը տիրամած: Այդ էլ մի աշխարհածանօթութիւն է, որոյ գաղտնիքը լաւ դիտեն խելօք կնանիք:

Եւ յիրափ, ի՞նչ օգուտ յարատե տրտում, տխուր լինելէն. մի՞թէ դորանով բաղդը կը խղճահարի, վատ հանգամանքը կլաւանայ, ձախորդութիւնը տեղի կուտայ յաջողութեան, թշուառութիւնը՝ երջանկութեա՞ն.—ամեննեին ոչ. անյաջող մարդը ևս առաւել կվատթարացրնէ իւր վիճակը, իւր գործը, եթէ վհատի, անճարացած մնայ: Այրուր ուրախ պահել, իւր շրջապատողներուն քաջալերել, անդադար զբաղել արդիւնաբեր աշխատանքով, Նախախինամութենէն յոյսը չի կտրել—ահա այն հզօր զէնքը ամեն ձախորդութեան դէմ, և այդ զէնքը ունէր քու մայրը և լաւ գործ դնել դիտէր նորան պէտք եղած միջոցին:

Առողի օրերը միայն, երրոր հայրդ աղեղողրմ լալով ակամայ յիշում էր մօրդ գովելի վարքը, բարքը և առանին գործունէութիւնը, սուզի օրերը միայն, կրկնում եմ, ես իմացայ որ մայրդ ոչ միայն բաւականանում էր ձեր ահագին գերդաստանի կառավարութեամբ, այլ և վերը յիշած գործունէութենէն զատ՝ ժամանակ գտնում էր հօրդ առեւտրական գործերի մէջ միջամուխ լինելու, և խոհեմ կարծիք և խորհուրդներ յայներու: Հօրդ գանձարանը միշտ եղել է նորա ձեռքը:

Այօրդ տնտեսութիւնը և կառավարչութիւնը գոված էր բոլոր քաղաքի մէջ: Եթէ համարես միայն ձեր գերդաստանը, որ բաղկացած էր տամարչինգ հողիէ և ծառաներէն—վեց-եօթը հողիէ—ահա քեզ մի

փոքրիկ գիւղե ազգաբնակութիւն։ Ելթէ տարին ամենիդ համար հինգ հինգ շապիկ կարուէր՝ ահա քեզ եօթանասուն-հինգ շապիկ։ բայց այդ շատ սակաւ է. եթէ երեք-երեք հալաւ կարես։ — ահա քեզ քառասուն և հինգ հալաւ։ այս չափով և քանակով հաշուէ ձեր տան ամեն ծախքը, ամեն պիտոյքը՝ մեծից բոնած մինչև ամենափոքրը, և կտեսնես որ՝ այդ պիսի ընտանիք, ինչպէս որ հարկն է, կառավարելը ոչինչով նուազ չէ, եթէ կառավարէիր մի փոքրիկ քաղաք։ Ո՞րքան հոգս, ո՞րքան աշխատանք, ո՞րքան արիութիւն պէտք է սորա համար։ Իսկ ամեն օր մանր երեխայքին վայելուչ հազժնել և դպրոց ուղարկել. իսկ մեծերի վրայ ունեցած ուրիշ կերպ հոգսը. իսկ դուստր պսակելը, նորան վայելուչ օժիտ պատրաստելը. իսկ տարուայ մէջ 2—3 անգամ մեծածախ կոչոնքը և 25—30 անգամ մանր խրախոնքները. իսկ հիւանդներին ինսամելը. իսկ փոքրիկ կայտառներին կարգի կանոնի մէջ պահելը. իսկ ստահակ, անհնազանդ, տիրանենգ ծառաներին կառավարելը. իսկ բազմաթիւ ազգականներին, բարեկամներին քաղաքավարական այցելութիւն տալը, դարուս պահանջմունքէն յետ չի մնալը, — այս ամենի համար բաւական չէր միայն բարի կամք ունենալը, ժրագլուխ և արի լինելը. դորա համար երկաթի առողջութիւն ևս պէտք էր։

Խ. այդպէս էլ էր։ Լուսահոգի մայրդ, արդարեւ, ունեցել է երկաթի առողջութիւն, որ կարողացել է տոկալու այդ ծանր լուծին ուղիղ քսան և երեք տարի. բայց առաւել կարողացած չէ դիմանալու։ Երկաթն էլ, եթէ չի մաշուէր, կժանգուէր այսքան տարի և այսքան աշխատանքէ։

---

Այս տարուայ [1874] Եպրիլի 2-ին ժամը 4-ին առաւօտեան մայրդ զգացել է բոլոր մարմնու մէջ սաստիկ դող. այսու ամենայնիւ, ամենա-

թեթև կերպով, առաւել միամտացնելով, քանիթէ վախեցնելով իմաց է արել հօրդ իւր հիւանդութիւնը: Հայրդ—ինչպէս որ նորա մշտական սովորութիւնն է.—առանց մտադրութեան թողուցած չէ այդ պարագան. իսկոյն մարդ ուզարկել է բժշկի ետևէն, որ գալով, շօշափելով հիւանդի շնչերակը՝ ասել է թէ ոչինչ վտանգ չի կայ, թէ հիւանդին և թէ անեցոց հանգստացրել է, խոստանալով որ 6—7 օրէն բոլորովին ոտքի վերայ կեանդնեցնէ նորան: Եյս միամտուած վիճակի մէջ մնում են անեցիք ուզիղ երկու օր և ոչինչ ծանրակշիռ բան, վերաբերմամբ հիւանդին, չեն ձեռնարկում: Իայց մօրդ հիւանդութիւնը գնալով սաստկանում է: Եպրելի 4-ին առաւօտեան մօրդ հիւանդութիւնը ցայն սաստիճան հասնում է, որ անփորձ աչքն ևս կարող էր նկատել, որ անգութ մահը արդէն խորունկ ցցել է ճիրանները իւր խեղճ զոհի մէջ, և փրկութեան ոչինչ յոյս չի կայ:

Եյդ օրը, առաւօտը 5-ին ես պատահաբար փողոց ելայ. յանկարծ արևմուտքի կողմէն արագ արագ կառքով գալիս է մի բժիշկ և կանգնում է ձեր տան առաջե. բայց ես ամենելին ուշադրութիւն չեմ դարձնում այդ բանի վրայ: Եւ իրաւ որ՝ որի՞ մտքին կուգար, որ քու մայրը մերձ ի մահ հիւանդ է. տասն անգամ իմ մեռնելս մոքէս կանցնէի, քանիթէ նորան: Եյդպիսի անհոգութիւն, այդպիսի աններելի անփութութիւն մի պատուական կնոջ կենաց մասին և այդ՝ այնպիսի գերդաստանի մէջ, որ ազգակցութեամբ կապուած է գրեթէ բոլոր քաղաքի հետ, ես չգիտեմ, դորա անոնը ի՞նչ դնեմ: Իժիշկների խորհուրդը ասել է, որ այսուհետեւ փրկութեան յոյս և հնար չի կայ. ինչ որ անելու էր՝ 15—20 օր առաջ պէտք էր անել:

Վանի մի ժամէն մայրդ փչեց հոգին:

Ոչ տնեցիք և ոչ բժիշկները, առաջի նուագ, կարողացած չեն իմանալու հիւանդութեան իսկական պատճառը. իսկ պատճառը եղել է յետագայ պարագան.

Այս շատ ժամանակ առաջ, ունեցել է կանացի „կանոնը“, որ փոխանակ սովորական 3—4 օրուան, իւր ընթացքը շարունակել է 13 օր. և որովհետև այդպիսի անկանոնութիւն նորան ստէպ պատահել է և առանց վատ հետեանքի է մնացել միշտ, ողորմելի կնոք յոյա ունեցել է, որ այս անգամ ևս անպատուհաս կմնայ, եթէ մի փոքր անսուադիր լինի դէպի իւր տկարութիւնը: Իայց այն էլ պէտք է ասել, որ այդպէս շարժելու կամ մտածելու բաւականին հզօր պատճառներ ունէր ողորմելի մայրդ: Խնչպէս վերը յիշեցի, մայրդ սաստիկ աստուածապաշտ, մարդասէր, զաւակասէր և քաղաքավարի, և այդ առաքինութիւնները, այս վերջին անգամը, կարձեցրին նորա կեանքը:

Այսուհացքի վերջին օրերն էին, երբոր նա արդէն զգացել էր որ հիւանդ է. բայց այդ միջոցին նա արտաքոյ հօրդ աղաչանքին, չի դադարում պաս պահել. բաց յայդմանէ, կամենալով Աւագ Հինգշարթի օրը հաղորդուելու, գնում է բաղնիք, հետը տանում է մանր երեխայքին, քրտնում է, յոգնում է, տանջվում է և թեթև հագուած դուրս է գալիս բաղնիքէն և սաստիկ մրսում է. բայց բանի տեղ չի զնում այդ: Ահա քեզ զո՞հ բարեպաշտութեան և զաւակասիրութեան: Այն օրերը մեռնում է մօրեղբօրդ դուստրը: Այսրդ թէկ հիւանդ, բայց չի համբերում, որ այդ համնգուցելոյն վերջին պարտքը չի հատուցանէ. տկար տկար գնում է թաղման: Օրն եղել է պղտոր և ցուրտ, այդ տեղ նորից մրսում է: Ահա քեզ զո՞հ մարդասիրութեան: Հիւանդանալից քանի մի օր առաջ մեծ-մօրդ հիւանդ-տես գալիս են մերձաւոր աղքականներդ. հիւրերը և մայրդ երկար ժամանակ մնացել են մեծ-մօրդ կե-

ցած սենեակը, որ պառաւի հիւանդութեան պատճառաւ սովորականէն աւելի տաք վառած լինելով՝ մայրդ սաստիկ քրտնել է, և երբոր հիւրերը տուն գնալու են եղել՝ մայրդ ճանապարհ ձգել է նոցա մինչեւ ցուրտ գաւիթը, ուր վերջին անգամ մրտել է: Եհա՛ քեզ երբորդ զո՞հ քաղաքավարութեան:

Եհա՛, սիրական Ա'արկոս, այսքան մանրամասնութիւնք կարողացայ ժողովել քու լուսահողի մօր մասին, թէ կենդանացնելով իմ մէջ եղած յիշատակները և թէ հարցնելով և լսելով քու մերձաւոր ազգականներից: Գուցէ այստեղ յիշած չեն ուրիշ և կարեւոր պարագաներ, որոնք կարող էին լոյս ձգել քու լուսահողի մօր ուրիշ լաւ յատկութիւններու վերայ և առաւել կը կենդանացնէին նորա յիշատակը. բայց այդտեղ ինձ մի՛ մեղադրիլ: Իմ շատ հարցմունքը մօրդ մասին անպատասխան մնացին: Ինչ և իցէ. յուսամ որ այս աննշան աշխատութիւնն դու կընդունիս իրրեւ նշան իմ անկեղծ բարեկամութեան դէպի քեզ և դէպի քու ընտանիքը:



ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԵՐ



Է. (2)

Ի՞նչ առաւել սրատշարժ կարող է խօսել ատենաբանի լեզուն, ի՞նչ առաւել սոս-  
կալ կարող է նկարել նկարչի վրձնող, ի՞նչ առաւել ցաւալի կարող է պատմել  
պատմաբանի բերանը, բանթէ այս քատմնելի պատմերը, որ կեցած է այս աշարիու հան-  
գիաւոր բարեկիս մեր առջև։ Եհաւ մեր ընտիր քաղաքացին գլխակոր, սիրող փշոած, հոգին  
յուսահասուած իւր թանկապին կողակցի դիակի առաջն։ ահա աղաւներամ որբուկ երթխայք,  
որոնց ամեն վայրին պէտք էր գործալցց մօր ինամբ և փայփայանք՝ զրիուած իրենց նիւ-  
թական և բարյական նեցուիէն։ ահա անսփոփ հայր և մայր, որոնց միմիթարութիւնն էր  
տեսնել իրենց աղջկայ երջանկութիւնը։ ահա անհամոր ազգականներ, բարեկամներ և ծա-  
նօթներ, որոնք քանի մի բարեկին յետ սև հողին պիտի աւանդնեն այն ինկան, որն միշտ նոցա-  
բաշխումէր իւր հօգու ու պարի շնորհը, —քաղաքավարութիւնն, մարդասիրութիւնն, միմիթա-  
րական խօսք, ուրախակցութիւնն, ցաւակցութիւնն, ժպիտ և արտասունքը։ Զէ, ես չեմ կա-  
րող նկարագրել այս տիտուր տեսաբանը, դա ամեն նկարագրութենէ վեր է. անհնարին է  
տրան պատմելը, —այս կենցանի պատմերը, որ մեր առջն է ամեն պատմութենէ վեր է.  
տրան կարելի է միայն հոգուով զգալ, և ես զիտեմ, որ ամենքդ, որ այստեղ ներիայ էք՝  
խոր կրզբաք :

Կ՞նչ միմիթարական խօսք կարող է ասել ատենաբանի լեզուն։ կայ մի միմիթարու-  
թիւն նորան, որ իւր ամենաթանկապին մասը, իւր անհուանալի կողակցինն, քանի մի բա-  
րեկին, անզարձ և առյաւիսեան պիտի մասնէ սև հողին, —և ինչպէս կողակցինն։ ո՞րն է այն  
միմիթարական խօսքը, որ պիտի փոխարինէ փոքրի երթխաններին մօր գութը և ինամբը —և  
ի՞նչպէս մօր. ինչո՞վ միմիթարենք այս թշուառ ծնօղներուն, ինչպէս գաղքրեցնենք նոցա-  
բաշխումը, որ կորուսել են իրենց մէկչատիկ աղջիկը, —և ի՞նչպէս աղջիկը :

Զէ, մարդուս լեզուն չունի այն սքանչելի ճարտարութիւնը, որ այդպիսի հրաշքներ  
գործէ։ Լաց ուրեմն, եղբայր Օակոր, լացէք ո՞վ հրեշտականման որբուներ. լացէք որդեկո-  
րոյս ծնօղներ, և մենք այս չքնաղ հանգույցելոյ բարեկամը, և դուք ազգականք, ծանօթք

(\*) Առաջարկել այս էպիղետ մէջ դադաշը ուսումն կորդապահուա:

և սիրելք—լացէք լացէք . գոնէ լացի մէջ զտնենք փորը ինչ թեթևութիւն , գոնէ մեր սրտի վրայ ծանրացած արէտքը , վեշտը և ցաւերը լրաւանկք , թեթևացնունք արտասունքով :

Լաւ նայեցէք այս առաքինի , իւր կինդանութեան ժամանակ ամօթխած կնոջ հիսնալի պատիերի վերայ . լաւ նայեցէք , որ մոքերէդ չելլէ , չիմուանաք . քանի մի բոպէէն յետ առյաւիհեան կծածկուի ձեզիմէն սորս երեսը , կրպինտուէք և չէք զտնիլ . լացէք լացէք :

Իսյց ամեն բան ունի սահման . ամեն բան ունի վերջ . մարդկային սիրտը մի այնպիսի հիսնալի յատկութիւն ունի , որ որքան և տրտում լինի , որքան և ուրախ լինի—երկար չի կարող պահէլ իւր մէջ այդ զգացմունքը . եթէ ուրախ է՝ կհանդարտի և կառնու իւր առաջուայ բնական ընթացքը . եթէ տիտուր է , ժամանակ անցնելով՝ կամաց կամաց կինջնի տիրութիւնը , կհանդարտի և կառանայ իւր տովորական ձեզ : Իսյց այս չէք իսր ասելուն : Ես չուվեմ և համարձակութիւն չեմ առնուլ վրաս տալ այն հոգեկան միսիթարութիւնը , որ Վրիստոսի և սուրբ Նարք բերանով ասուած լսեցիք սուրբ տաճարին մէջ . ես չուվեմ և չեմ կարող ցանքեցնել ձեր աքքերի առատ արտասունքը . — այդ ժամանակը ինքը պիտի ցանքեցնէ : Ես մի քանի բարեկամանան խօսք ունիմ , որ այս հանդիսառոր բոպէիս , այս օրհասական գաղաղը առջեւ , ի ներկայութեան այս բազմութեան , ի ներկայութեան որբիկ մնացած երեխաներին , ունիմ ասելու քեզ , ո՞վ սիրական Յափր եղբայր :

Ալինի որ յուսահասութիւնը քեզ տիրապետէ . լինի որ բնական աշխուժութիւնդ մէջդ թուլանայ . լինի որ թոյլ տաս հոգուդ հիւանդանալու , որ—Կատուած ազատէ—իւր հետ կհիւանդացնէ և քու մարմինը . ամեն օր , ամեն ժամ և ամեն բոպէ միաբ արա , որ այսուհետեւ ոչ միայն հայր ես , այլ և մայր միանգամայն . եթէ զու առաջ մի անձն էիր , այժմ պիտի ձգնիս որ քու մէջ երկու անձն ստեղծես և՛ հայր , և՛ մայր : Ոչ մի բոպէ չդադարիս քու զաւակացդ վերայ նայելին . չկարծես թէ այդ քեզ տրտութիւն , յուսահասութիւն կպատճառէ . ոչ , զաւակացդ վերայ յածախ նայելով՝ զու կմոսարերես նոցա առանց մայր մնալը , և զու մէջ նոր ոյժ կըստեղծես , ինքդ քեզ կըստեղծես :

Զաւակացդ վերայ յածախ նայելը չկապիսի քեզ յուսահաստեղնէ , ոյլ ընդհակառակն միշտ միօքդ կուգայ , որ զու պարտաւոր ես ի սէր նոցա՝ քեզ պահպանելու , կեանքիդ օրերը խնայելու , աշխատութիւնդ չժուլացնելու և ժրածանութիւնդ կրինապատիելու :

Ալինի թէ քու տրտում դէմքդ ամեն օր տեսնելով՝ անմեղ երեխայրդ ակամայ կամոք ինքներն ալ տիրին , և այդ տիրութիւնը նոցա երեսի տիպարբէ վրայ իւր դահլան գնէ . ոչ , ոչ . զու պարտաւոր ես ինքդ քեզ բռնաբարելու և բռնի երեսիդ տրտութիւնը փա-

բասելու։ Ալինի որ սիրադ տրտում պահէնս։ Եթէ սիրադ տրտում լինի՝ հարկաւ խօսքդ ևս տխուր կլինի. այդ կերպով հրեշտականման երեխայքդ, առանց յանցանաց, զրեթէ օրորոցի մջն զրիուած կլինին զուարթութեան, ուրախութեան բարերար ազգեցութենէն, հրեշտականման երեխայութենէն զուրկ կիման։

Երդմինեցնում եմ քեզ այս—քեզ և շատերի համար—սուրբ ննջեցելոյ դադարի առաջն, որ եթէ քու կողակցի և զաւակացդ մօր մահը ուրպիսի և իցէ բարոյական վաստ հետեւանը ունենայ թէ քեզ և թէ զաւակացդ, առաջի Խատուծոյ, առաջի խզմտանըիդ, առաջի զաւակացդ և առաջի սիրելացդ և բարեկամացդ, պարտաւոր կլինիս. վասն զի երեխայութեան ժամանակ ստացած տպաւորութիւնը շատ մեծամեծ հետեւանըների պատճառ է։

Իմ ասածի մէջ չտփազանցութիւն չի գտնես. ամեն օրուայ փորձը և ինքն իսկ պատմութիւնը վկայ է ասածիս ճշմարտութեան։

Եմնքս գիտենք, որ ժամանակաւ աշխարհիս վերոյ կեցել են, ապրել են, ներգործել են և վերջապէս մեռել են Ա. Գրիգոր Լուսաւորիչ, Ներսական Շնորհակի, Պովէս Խորենացի, սուրբ Եղիշէ, Ա. արքան, Եշոս, Աբրամ, Ա. աշխնիթոն, Ֆրանկլին, Կոպերնիկ, Գալլէյ, Յովհաննէս Հուսս, Լիւթեռ, և այլն, և այլն, և այլն. գիտենք որ սոցանից շատերը ցաւով և տանջանքով մեռել են. բայց մենք անմիտիթար չենք լավիս, չենք յուսահատվում նոցա վերայ, թէ էն գիտենք որ ամենքը բարի, լաւ, օգտաւէս մարդիկ էին։ Երդպէս էլ քանի մի ժամանակէն պիտի լինի հանգուցեալի յիշատակը քու ընտանեաց մէջ։ միշտ պիտի յիշարի նորա պատմութիւնը, նորա առաւելինի վարքը, նորա գովելի գործերը, նորա խնամալից խօսուածքը, միով բանիւ նորա յիշատակը մեր մէջ կենդանի, անմահ պիտի մնայ ինչպէս հետեւ որինակ, ինչպէս նիւթ դաստիարակութեան քու սիրելի զաւակաց, և ոչ թէ ինչպէս առարկայ անմիտիթար և անպատուղ լացի ու սզոյ։

Եղբայր Յակոբ. կշահ այս երկու յիշատակը ըւսաւորեալ ժողովոց իւրեանց պատմական և մասնաւոր անձի համար, և յիշատակը խառնիճաղանձ խաժամուժի. որի՞ մէջ առաւել սիրտ, հոգի և բանականութիւն կայ. նորան, որ պատվում է հանգուցեալին, կրկնելով, պատմելով, սերսելով նորա վարքը և զրոձքը, թէ նորան, որ լացով, արտմութիւնով, մազերը փետփանը հեթանոսաբար յուսահատվելով՝ իւր մեռելին պատվում է...»

Աիրական Յակոբ եղբայր, դու մեր վերայ ևս մի փոքր ուշի գարձեւը. հասկացի՞ր մեր հոգեկան վիճակն ևս. դու այս բոպէիս լավիս ես, տրտում ես քու անմուանալի կողակցի վե-

բայ . բայց մեր մէջ կան և այնպիսիք , որ նոյնքան ցաւում են նորա վերայ , դարանից աւելի քու վերայ ևս ցաւում են . . . .

Ի՞նչ կը յանայ այդ ընդհանուր յուսահատութենէն : Կու մռանում ես , որ այս այն բոպէն է , երբ որ պէտք է պահպանել իւր մէջ արիութիւն , քաջարտութիւն , աշխուժութիւն , ներկայութիւն հոգոյ : Եթէ դու , որ նեցուկ ես բազմանդամ՝ գերդաստանի , այդպէս վհատած , ընկճած ես , Ի՞նչ պիտի անձն նորա , որոնք քեզ փաթաթուած կինում են . չգիտե՞մ որ քու այժմ աքելովդ , քու մի սիսալ քայլափոխ անելովդ , քու մի բոպէ ներկայութիւն հոգւոյդ կորանելովդ՝ ամենքը պիտի գլորին , հողի հետ հաւասար լինին . մռանում ես որ եթէ—Եստուած հեռի պահէ—դու մի բոպէ թոյլ տաս քեզ խղճակի առարկայ լինելու , հետո բազմաթիւ անոյժ , անզօր , անմեղ անձննք պիտի ովախ վախու ասելու առարկաներ գտանան :

Եղբայր Յափոր , եթէ քու մէջ գեռ ևս մռուած չէ այն երեկէլի Յափովը Խլըտմեանը , որ բոլոր քաղաքիս խելքը ու խրատ էր տովորեցնուում . բոլոր քաղաքիս տկարներուն և նեղեալ ներուն օգնութիւն և մեռնուութիւն էր հասցնում իսօսքով և գործով , սթափէ ուրեմն , արթնացի՛ր այդ բարոյական ուշաժափութենէն : Եշրջմնեցնուում եմ քեզ այն խնիւլի գիտիք առաջն , որին կեանքիդ մէջ այս վերջին անգամն ես տեսնում , ոյժ , խելքու , բանականութիւնդ , խոհեմութիւնդ վշագ ժողովէ . նոր մարդ դարձիր . յաղթէ անշաղթելին , կատարէ անկատարելին , մէջդ գերբնական զօրութիւն դուրս բղինեցնուր . վասն զի նորա , որոնք քեզ շղջապատում են շատ , շատ և շատ կարօտ են քու և միայն քու օգնութեանը : Եմէն :


ՈՒ . Պատրիանելուն .

Բ. (8)

Ի ԳՐԱՄԱՐԵՐԻԿ ՄԱՀ ՑԱԽԱՅ.

ԺԱՌԱՆԿԱԿԱՆ ՊԱՍՈՒՏԱՆԵՋԱՐ ՑԱՂԱՔԱՑԻՈՑ

ՅԱԿՈՒԼԱԾ ՄԱՏՔԻՌՈՒՆԵԱՆ ԽԵՂՏԱՆԵԱՆ.



Ահանքը տեսարան, տրտմալից երկոյթ, անանիւռունելի անցը, տարաժամ սուդ բոլոր հան-  
գիսականաց համար. սուդ՝ որ կներկայացընէ մեզ ամենցունց այս աղնուատոհմ  
բարեպաշտուհի Տիկնոջ մահը. այն մահը՝ որոյ անաշառ դատաստանին դատովը մեր  
ամենեքեանքս պիտի դատուինք անիմանալի կերպով, մարդկային ամենայն հնարքը, ամե-  
նայն ջանքը, ամենայն զգուշութիւնը յունիչ կրաքալնէ մահը: Մահը իւր յանկարծահաչան  
սուր մանգապաւը մարդու կինաց թելերը կը կարատէ, և մեր ուրախալի սրտերը տրտմալութեան  
և սպոյ վարագուրավը կծածկէ: Խնչպէս որ մեր ալ, ամենեքեանքս այս հանգուցելոյն դագա-  
ղն մաս հաւաքուած խուռան բազմութեամբ՝ ցաւալից սրտով և ողբալից արտասունքներ  
ազքերնէս թափելով՝ դարձուցած մեր հայեցուածքը ազնուասիրա հանգուցելոյն մարմնոյն,  
սրտերնուս խորերէն ախեր վախեր և հեծեծանաց հառաւանքներ կը թացընենք: Գորովագութ-  
հանգուցեալը, երիտ օր առաջ, իւր ամենայն և միրելի դաւակացը առջն մարմնոյն զժուա-  
րակիր ցաւոյն հետ պատերազմելուն յետայ այսօր ազքերէս աներեսոյթ պիտի լինի, որով  
անդին կորսական տէր պիտի հաշուենք ինչպէս տրա այն մերձաւորքը, այնպէս ալ այս  
բոլոր հանգիսականքը: Եռաւելապէս զգալի է այս կորուարը այն ընտանեաց համար, որոց  
զիանառ անգամն էր նաև այս մեր բազմելրախտ հանգուցեալը. այսօր այն ընտանիքը անզգայ  
և թուլացած արդէն կամայ ակամայ թող պիտի տան հանդելայն մօրմինը սկ և սառն  
հողոյն տակը. նա մանաւանդ ցաւ է հանգուցելոյ ամուսնոյն համար տանել և իւր ձեռքը  
կատարելը իւր այսափի տարուան սիրելի կնոջ անժամանակ մահուան հանդէպը. ցաւ է  
միանգամայն հանգուցելոյն ծերունի և ալեզարդ ծնողաց անսնել այս տիտուր երկոյթը,  
որք այս ծերունի հասակներուն մէջ, ազքերուն արտասուաց ազքիւներուն սիերը  
կամայ ակամայ պիտի բանան յարդահոս աղբիւներու նման: Ա երջապէս, ցաւ է  
անմել դեռահաս և մասաղերամ աղջկանց իւրեանց միակ սիրելի և գորովագութ մօր

(8) Յա գումակ մէջ, դադալ սուսէ կորպացւեցու:

այս անպատճելի վիճակը . խակ այն կակիծը , որ այսօր այս մեր բարեկայտ հանգուցեալը սերմանեց մեր սրտերուն մէջ , մեղմէ ամէն մէկը լաւ կզբայ , ուրեմն աւելորդ կհամարիմ բացարկելը : Առդ , որովհետեւ վիրին Տեսչութիւնն և ամենաբարին Ըստուած հանգուցելոյս վրայ վիրջն կնիքը գնեն լով՝ հրատիրեց վինքը այս աղետալի աշխարհին դէպի իւր գիրկը , ուստի մենք ալ պարուաւոր ենք մեր վիրջն հրաժարականը տալ ու բաժնուիլ , բարեխօս բռնելով վինքը առաջի Ըրարշն մերց : Ուրեմն տանք միաբերան . , Երթաս բարեւա , ով աղնիւ և ամենցունց համակրութիւնը վայելով տիկին , երթաս բարեւա այն երանաւէտ կեանքը , որուն մեք ամենեքեանքս ալ քեզ նման , քանի որ ժամանակնիս կներէ , կպատրաստուիմք : Երանիք քեզ որ այսափ կարծ ժամանակուան մէջ կատարելով քո մայրական պարտը առ քո սիրելի աղջիռնքը , զոյս սիրելով գգուելով հասուցիր նոյս այժմեան ծառիկ հասակնիւուն , կթողուս այսուհետեւ իւրեանց հօր ինանցոց և հզուտարութեանը : Երանիք քեզ որ մեր ալ քեզ նման պարտքերնիս կատարելով՝ հեռանայինք այս անցաւոր աշխարհէն . յաւիսենականութիւն : Ուստի ի վիրջը , մեծապատիւ հանդիսականք , մեր վիրջն հրաժարականը պատառացաց աչօք տոյս տան մարմնոյն և գագաղին տալով՝ խնդրենք Նստուեց . որ զմեզ արժանի պատացէ ունենալ սրտերնուս մէջ յոյս այս վինուորեալ աշխարհին վերայ քաջութեամբ պատերազմելու և յաղթութեան դրոշակը ձեռքերնիս և փառաց պատկը զուսինիս , պայծառ երեսով և ուրախ սրտով գիմենք հօր Ըստուեց գիրկը , այս հանգուցելոյս մեզ առաջած օրինակին նման , և վայելել այս երանաւէտ կեանքը , զոյ Ըրարիշն մեր մեզ մահանացուաց համար պատրաստել է այս անցաւոր աշխարհէն բաժնուելներէս յետոյ :

Ավեան սարիսաւոք Փակալւան .

Դ. (\*)


ԱԴԱԿՈՐ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ Հ

**Թէ** էպէտ սրբազն առաքեալներէն մէկը կանէ „Ըրդարն ի վորու և լց զժամանակ իւր“  
առկայն դարձեալ ինձ ի մասնաւորի շատ զբաղի է, որ արտմաշուը հանդիսիս մէջ  
ի հարիէ առխոռւած եմ զրեթէ առաւել եղերարան լնել, վասն զի մահը թէ և բնական  
իրագործութիւն մէն է, բայց և այնպէս ամէն առ և ամէն ժամանակ կպատճառէ մեղ  
անտանելի վիշտ, քանի որ այնու մենք կրամնուինք մեր այն սիրելացմէ, որոնք կեանք ի մէջ  
մեզ հարիսաւոր էին երջանիկ ու բարերաստ կազմելու զայն, որովհետեւ անոնցմով պիտի մեր  
համալրութեանց համաձայն մի ըրջան լրացուցանէնք ուղար մասր ճամփաներով այս վշտալց  
աշխարհիս մէջ նորս օրերուն գառնութիւնքը ամփելու. Եւ երբ բնական կերպով մը կիս-  
տարուի այս ցուրտ ու խաւարանած երևոյթը, չպէտքէ տնենանք զրա դէմ չափէ. զուրս  
վշտազնութիւն, որպէս և անպայման կարեկցութիւն, վասն զի մահը ու այլ ինչէն եթէ  
ու նոր կեանք, եթէ ու վերածնութիւն, եթէ ու հոգիացումն: Այս կէտէն նայելով,  
արամահուրդ մերձաւորը, մենք միտիթարուած կըլլանք, և նոյն խոկ մեր կենացնութեան  
մեծ կէտ որ է հոգին, պիտի այս կէտէն ամբանայ և պարարտանայ. արժանաւոր քաղաքացի  
պատրաստելով երինից քաղաքի համար. զայն զրո ի նանիր կտրամեցնեմք լալով իր վերայ.  
առկայն աստանօր կմայ մեզ մի կարմեր բան հետազօտել որ այս կեանքի ամենա-  
հարիսաւոր պայմաններէն մէն է, արգեօք մարդը լրիւ կատարեց. ասօրեայ կեանքի ասպարէ-  
զին մէջ իւր սրբազն պարտաւորութիւնքը . . . Այս է որ մեզ առաւել կիստացնէ և կո-  
րախայնէ միանգամայն: Այսօր մեր կորուսան է վսեմ մայր, բարեպաշտ և ողջախոչ կին և  
քաջքասիրտ ու հեղաշողի անդամ հասարակութեան իւր ծածուկ ու յայտնի բարեգործու-  
թիւններով . . . որոնք զնա, այս մեզ համար սարսափելի քայլին մէջ զուցէ շատերու  
սրտի համար լրացուցին . . . այս, իցէ թէ Աստուծոյ այս բարեշնորհ աղախինը ի վաղուց  
պատրաստուած էր հանգչել այս երկրաւոր հոգմերէն, նաւու մը պէս՝ որ ալեաց դէմ լաւապէս  
ոգորելն յետոյ՝ միայն խազաղ և անքոյթ նաւահանգստի կազասէ . . . այս, ամենաբարի

(\*) Դերեւում չերոյ, գոգաչ առաջ կորդացածաւ:

Ըստուածը համեցաւ կոչել իւր մօս զիւր խոնարհ աղախինը . կեանքի փոթորկայց ծովէն չանելով , դէպ ի անանց և խաղաղական հովիտը , վասն զի առաքինի կեանքը պատրազմէ ինկապէս , և մահը , այս ցուրտ և անտարբեր երկույթը , գերապանձ յաղթանակ , որուն կարօտէ ամէն քոյլի մէջ մեզմէ իւրաքանչեւր ոք : Ապա ուրեմն , արու հազգեաց բարեկամք և չանդիսականք , եթէ ներ մէջ կայ մի շամակրութիւն առ բարեպաշտու չի չանգուցեալը , միսիթարուեցէք , որ առ առժամանակ մի միայն կրամնուի ձեզմէ , որ ազա յաւիտեան միանայ իւր որր սիրելեաց հետ , երինային կեանքով : Այս քաղցր և շատատաւն յայն է միայն որ կմայթարէ զմեզ կեանքը պատահարաց ամենամեծին մէջ , որ ողբան անտանելի է , այնքան և ամբացոցի մեր պատի թուլութեան , վասն զի յերկրէս դէպ ի երկնիք կիսխուի առաքինութիւն մը և ոչ առաքինի : Այս պանչևլաշրաշ երկույթը կրանայ մեզ շամար այն երջանիկ կրիւր , ուր շաւատով միայն կրնանք մրցիլ և շաւատով ապրիլ , ուր որ մահուան ու կերպարանքը պիտի կորցնէ իւր արշաւուիքը , ուր որ պիտի խնդանայ նա իւր զօրութեամբ մեր քաղցր ամիսարութենից սարսափելի ամաչելով զորոնք կպարունակին քրիստոնէի մը ցաւատոր պատի մէջ . ոչ նեղ և անձուկ է դուռն , որ տանի ի կեանա , քաղցր է ուրեմն կեանքը և ինչու քաղցր չպիտի լինի մահը , որ առաւել տենչւալի օրերու դուռն է . . . Քաջացէք , շաւատոցէք , մի արսափիք , մի շփոթիք այս բաղնուածքի դէմ . քանդի ասաւածային հրեշտակը է զարիօզ այն տան դուռը , զոր կիրէ . . . և այս սէրը խրատ մըն է մեզ ամենէն առելի կարենք , աղթեցէք , վասն զի մարդկային Ըստուածամարդն իսկ աղօթքի մէջ միայն գտաւ սփոխանք , երբ մահուան բաժակի դասնութիւնքը երեւակայց : Զիայ ուրիշ միսիթարանք , ամէն բան տատ է , ամէն բան իրր ստուեր կանցնի , և կիանքը — այս ի՞նչ է կեանքը , եթէ ոչ փախտաւ դէպ ի ստուերը տասպակիդ ճամփորդի հանգստեան վայրն է , որուն կարօտ է ոմէն խնջացած սիլս : Աղօթեցէք վերջին անգամ , թող ամենիս և ամենային անօրէն Ըստուածը ամբացուցէ հանգուցելոյս բարեկամաց վասահար պտուերը . թող զնա դա այդ ցանկալի ճանապահն , որուն մեզմէ շատերն իսկ այս բոպէիս կփափազին : Անդիսաւ և խաղաղութիւն քեզ . առաքինասէր մարդ . հանգիստ և անդորրութիւն քո շամբաւածնէ սիրակցիք , հանգիստ անուշ և սիրաւան զաւակացդ , հանգիստ և վասալից բարեկամացդ . զնա ի խաղաղութիւն , հոգիացած Արքունիք , արժանաւոր ըստ ամենային այն ստոր օթեանին , զոր պատրաստեց իւր սիրելեաց շամար Ապյոն Ըստուած , Արքին փառաց և Ապյոն սիրազգած :

Խոստադուր Տէր-Անդրէլուստան :





[ 4 h. ]

ԳԱԱ Գյուղագործության Գիւղ. Գյաղ.



FL0081469

